


11 x 12

Newspaper  
2h 12 min 674 rpm.  
pitcher 190 g.

(47.925)  
2 - 15



13.01

ՊՈՏՄԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

95



ԱՐԵԱԿ  
ԵՐԿՐՈՐԴ

Մ. Ք. Պ. Ա. Զ. Ա. Բ Ե Ա. Ե

9(47.925)  
2-15

ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՔՏՐԱՑՈՒԱՐՆ ՕՐ. Ն. ԱՐԱԽԵԱՆՑԻ. ՊՕԼԻՏ 7  
1909

11,812

2011-09 21,11,2007  
ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

9(47-925)

2-15

ԱՀ

1.

# ԱՐԵԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Հ 925

Մ. Ք. ՂԱԶԱՐԵԱՆ



ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՖՏՐԱՏՈՎԱՆ ՕՐ. Խ. ԱՐԱԿԵՄԱՆՅԱ. ՊՕԼԻ 7  
1909

## ՀՆԹԵՐՑՈՂԻՆ

Այս գրքոյկով սկսում եմ պատմական կենսագրութիւնների մի շարք, որի նպատակն է դիւրամատչելի պատմողական ձևով ներկայացնել նշանաւոր պատմական անձերի և դէպքերի նկարագիրը:

Ինչպէս այս, այնպէս էլ յետագայ գրքոյկների մէջ նկարագրուելու է գլխաւորապէս երկրի ներքին կեանքի հանգամանքները, իսկ արտաքին յարաբերութիւններն ի նկատի են առնուելու այն չափով, որքան նըրանք անհրաժեշտ են ներքին եղելութիւնները պարզաբանելու համար:

Այս նպատակով կենսագրութիւնների նիւթը քաղում եմ հայոց պատմագիրներից, իսկ օտար պատմիչներից և նոր հետազոտութիւններից օգտում եմ հայերի և նրանց հարևանների յարաբերութիւնները ցոյց տալու, դէպքերի յաջորդականութիւնը ճշտելու և հակասութիւնները համաձայնեցնելու համար:

Ներկայ գրքոյկը կազմելիս այս եղանակով օգտուել եմ Փաւստոս Բիւզանդացի պատմագրից, աշխատելով կարելի եղածին չափ հաւատարիմ մնալ նրան թէ նիւթի և թէ պատմողական ոճի նկատմամբ: Բոլոր յատուկ անունները պահուած են նոյնութեամբ:

Ընդհանրացած այն կարծիքը, թէ մեր պատմա-  
գիրները պատերազմներ ու կոտորածներ են միայն  
նկարագրում, հիմնաւոր չէ. նրանք հաղորդում են շատ  
արժեքաւոր տեղեկութիւններ նաև երկրի մէջ անցած  
դարձածների մասին. բայց այդ տեղեկութիւններն  
այնպէս ցըռուած են և շատ անգամ կցկառուր, որ ըն-  
թերցողի աչքից վրիպում են, իսկ մեծամասնութեան  
անհասկանալի են լեզուի պատճառով։ Այդ տեղեկու-  
թիւնները ժողովել, դասաւորել, ճշտել և պատմողա-  
կան ձեռվ դիւրամաշելի դարձնել, տալ նաև պատ-  
մական անձերի նկարագիրը—այս է իմ ձեռնարկու-  
թեան նպատակը։

7 Նոյեմբերի 1909  
Թիֆլիս

Ա. Բ. ԴԱՇԱՐԵԱՆ

1.

Զորբորդ դարում Հայաստանը նման էր ալե-  
կոծուած ծովի. ներքին խոռվութիւններն ու  
արտաքին արհաւիրքները վրդովում էին մեր  
դժբաղդ երկիրը։ Նախարարները, որոնք սեփա-  
կան գաւառների տէր էին, իրենց զօրագնդերով  
շարունակ կրիւ էին մղում միմեանց դէմ և մի-  
մեանց կոտորում։ Շատ անգամ նրանք ապրու-  
տամբում էին թագաւորից, դաւաճանում էին  
նրան, հնազանդում էին հայոց դարեսը թշնամի  
պարսից արքաներին և պարսկական զօրքի հետ  
միացած աւերում էին իրենց բնիկ հայրենիքը։  
Թագաւորը, կեդրոնական իշխանութիւնը զօրաց-  
նելու համար, շատ անգամ ստիպուած էր լի-  
նում իշխանական ամբողջ տներ կոտորելու, բնա-  
ջինջ անելու։ Ընդհարումներ էին առաջ գալիս  
հոգեոր և մարմնաւոր իշխանութիւնների մէջ։  
Ամբողջ երկիրը ներկայանում էր ներքին ան-  
ընդհատ կոիւների, դաւաղրութիւնների, մատ-  
նութիւնների և կոտորածների ասպարէզ։ Քա-  
ղաքներ ու գիւղեր հրոյ ճարակ էին դառնում  
կամ հողին հաւասարում, բնիկ իշխանները թող-  
նում էին իրենց տոհմական բերդերն ու ամրոց-  
ները, փախչում էին օտար աշխարհներ, շրջակայ

ուամիկ ժողովուրդը մնում էր անպաշտպան և անխնայ կոտորւում, երկիրը քարուքանդ էր լինում:

Հայաստանի բոլոր գաւառներն ունեին իրենց սեփական տէրերը: Վանայ ծովից հիւսիս, Արածանի գետի կանաչազարդ ափերին տարածւում էր Մանաւազեան ցեղի երկիրը. անյիշելի ժամանակներից բնիկ հայկական այդ ցեղը տիրում էր Մանազկերտի գաւառին: Նրանից ոչ շատ հեռու, Երասխի հովտում տարածւում էր Բասեն գաւառը, որտեղ էր Որդունեաց ցեղի երկիրը:

Մեծն Տրդատի որդի Խոսրով կոտակի թագաւորութեան ժամանակ Մանաւազեան տոհմի իշխանը և Որդունեաց ցեղի նահապետը կատաղի կոփւ էին մղում միմեանց դէմ. կոփւը գնալով սաստկանում էր, հայը հային անխնայ կոտորում էր, շրջակայ իշխաններից ոմանք Մանաւազեանների կողմն էին, միւսները Որդունեաց էին պաշտպանում, աղմուկ ու շփոթ էր ամբողջ Հայաստանում: Խոսրով թագաւորը և Վրթանէս կաթողիկոսը՝ Գրիգոր Լուսաւորչի որդին շատ էին աշխատում վերջ գնել եղբայրասպան կոռւին. ուղարկեցին Աղքամնոս մեծ եպիկոպոսին նրանց հաշտեցնելու, սակայն ծերունի եպիսկոպոսի յորդորներն ի զուր անցան, նա արհամարհանքի ու անարգանքի մատնուեց: Երկու ոսոխ ցեղերը, վրէժինդրութեամբ լցուած, աշխատում էին միմեանց բնաջինջ անել: Երբ Աստուծոյ պաշտօնեայի խրատը չաղղեց, թա-

գաւորը դիմեց զէնքի զօրութեան. նա հրաման տուեց Մամիկոնեան Վաչէ զօրավարին, որ հայոց բանակի սպարապետն էր, արքունական գընդերով գնալ, խստիւ պատժել անհնազանդներին, ոչ ոքի չխնայել:

Մամիկոնեան ցեղի իշխանները, Տայոց աշխարհի անմատչելի լեռներում ամրացած, հաւատարմութեամբ ծառայում էին իրենց հայրենիքին, և հայոց թագաւորները նրանց էին հաւատացել ընդհանուր բանակի սպարապետութեան և արքունական գնդերի զօրավարութեան պաշտօնը: Վաչէ զօրավարը քաջ էր կոռու դաշտում, անվեհեր՝ Հայաստանի ներքին և արտաքին թըշնամիների դէմ, անձնուէր իւր թագաւորին: Արքունական զօրքն առած նա մտաւ Բասենի և Մանազկերտի սահմանները, անխնայ կոտորեց երկու թշնամի ցեղերին, իւրեց նրանց հողերն ու կալուածները. Մանազկերտ իւր գաւառով և ըուլոր սահմաններով տուին Աղքամնոս եպիսկոպոսին, իսկ Որդունեաց հայրենի գիւղը՝ Որդորու իւր շրջակայքով ընծայեցին Բասենի եպիսկոպոսին:

Հայաստանը խաղաղուեց, բայց այդ խաղաղութիւնը երկարատև չեղաւ: Մինչ Խոսրով թագաւորը և Վաչէ սպարապետը զբաղուած էին շինութիւններով, գուժկան հասաւ, թէ պարսիկները մտել են Հեր և Զարևանդ գաւառները: Թագաւորի հրամանով պարսից դէմ գնաց Բըզ-

նունեաց նահապետը՝ Դատաբէ։ Ի՞նչ անցքեր անցան այնտեղ, ինչ խոստումներ արին նրան պարսիկները, մեզ յայտնի չէ։ գուցէ Բգնումնեաց իշխանը բարեկամ ու կողմնակից էր իւր հարևան Մանաւազեան իշխանին, ուստի և վրէժ ունէր Խոսրովի և Վաչէի դէմ և այժմ յարմար առիթ էր գտնում վրէժը լուծելու. գուցէ նա համակրող էր պարսիկներին, ուստի և թշնամի իւր թագաւորին, որ հակուած էր քրիստոնեայ յոյների կողմը։ Մեզ յայտնի է միայն, որ Դատաբէն բարեկամացաւ պարսից զօրավարների հետ և խոստացաւ նրանց ձեռը մատնել իւր հարազատ տիրոջը՝ հայոց թագաւորին։

Դաւաճան հայ նախարարի խորհրդով պարսիկներն առաջ անցան և յանկարծակի յարձակուեցան հայոց գնդերի վրայ։ Շատերը զոհ գընացին նենգաւոր յարձակմանը, մնացածները փախան։ Դատաբէն պարսից զօրքի գլուխն անցած գալիս էր Հայաստան, Խոսրովին ըսնելու. սակայն փախած հայ զօրականներն արդէն հասել էին թագաւորի մօտ և յայտնել էին Դատաբէի դաւաճանութիւնը և հայոց զօրքի գլխին եկած փորձանքը։ Խոսրով արքայի կեանքը վըտանզի մէջ էր. վրայ հասաւ Մամիկոնեան Վաչէն երեսուն հազար զօրքով, հանդիպեցաւ պարսիկներին Բգնումնեաց ծովի մօտ՝ Առեստ աւանում, որտեղ արքունի ձկնարաններն էին։ Պարսիկ զօրքին թիւ ու համար չկար. վիթխարի վը-

դերի երկար շարքերը սարսափ էին ազդում նայողին։ Հայերը յոյսերն Աստծու վրայ դրած, վստահ իրենց սիրելի սպարապետի փորձառութեանն ու քաջութեանը, առիւծի նման ընկան թշնամու վրայ. Վաչէ Մամիկոնեան և Վահան Ամատունին բռնեցին դաւաճան Դատաբէին, բերին թագաւորի առաջ։ Նրա վրայ կատարուեց արագ և արդար դատաստան. նա դաւաճանել էր իւր հայրենիքին և իւր բնիկ տիրոջը, ուստի և նրան քարկոծելով մեռցրին։ Նրա ընտանիքը գտնուում էր Աղթամար կղզու վրայ, Ոշտունեաց իշխանական ամրոցում. Վաչէ զօրավարը նաւ նստեց, անցաւ կղզին, անխնայ կոտորեց դաւաճան իշխանի կնոջը և զաւակներին և նրա տունն ու բոլոր կալուածներն արքունական դարձրեց։

Բգնումնեաց իշխանի դաւաճանութիւնը երկիւղ ազդեց թագաւորին. այնուհետև նա կասկածում էր բոլոր նախարարների վրայ. ուստի և կարգ սահմանեց, որ մեծամեծ նախարարները, որոնք ընդարձակ զաւառների տէր էին և բազմաթիւ գնդեր ունեին, մնան թագաւորի մօտ, նրա հետ շրջեն, և նրանցից ոչ ոք առանձին չգնայ պատերազմ։ Նա վախենում էր, թէ նրանք էլ այնպէս վարուեն, ինչպէս Դատաբէն էր վարուել. վստահ էր միայն Վաչէ սպարապետի վըրայ, որի անպայման հաւատարմութիւնը շատ անգամ փորձել էր, որ իւր կեանքը դրել էր հայրենիքի և բնիկ տիրոջ պաշտպանութեան համար։

Նրան չեր կարող շլացնել ոչ իշխանական պատիւը, ոչ հարստութիւնն ու ստացուածքը. չեին կարող կաշառել պարսից արքայի մեծամեծ խոստումները: Թագաւորն այնուհետև գումարում էր աւագ նախարարների գնդերը, միացնում էր արքունի զօրքին և յանձնում էր ծերունի Վաչէ սպարապետին և Պահան Ամատունուն, որոնք գիշեր ցերեկ պատերազմի դաշտումն էին, արթուն աշքերով հսկում էին ներքին խաղաղութեան վըրայ, քաջութեամբ կուում էին պարսիկների դէմ և չեին թողնում, որ թշնամին անցնի սահմանը, աւեր ու ասպատակ սփոէ հայոց երկրում:

Խոսրով արքայի կասկածներն ի զուր չեին. Դատարէի սպանութիւնից շատ ժամանակ չեր անցել, երբ մի ուրիշ զօրաւոր նախարար՝ Աղձնեաց նահանգի մեծ իշխանը, որ Հայաստանի սահմանապահ բղեշներից մէկն էր և արքունիքում բարձ և գահ ունէր, մտերմացաւ պարսից թագաւորին, հպատակուեց նրան, բաժանուեց հայոց միաբանութիւնից և պարսկական զօրքի հետ միացած սկսեց պատերազմել իւր հարազատ թագաւորի դէմ: Մեծ էր Աղձնեաց Բակուր բղեշի զօրութիւնը, բազմաթիւ էր նրա զօրքը: Գտնուելով Հայաստանի նարաւային սահմանի վրայ, Աղձնեաց նահանգը մօտ յարաբերութիւնների մէջ էր դրացի Պարսկաստանի հետ: Պարսկական զօրքն ազատ համարձակ մտնում էր այնտեղ, նրա հետ միանում էին Աղձնեաց գլու-

դերը և գաւաճան Բակուր իշխանի առաջնորդութեամբ անցնում էին Հայաստանի խորքերը, աւարում ու աւերում էին երկիրը և պատերազմում էին թագաւորի և նրա հաւատարիմ իշխանների զօրքերի հետ: Խոսրով ուղարկեց ապստամբ նախարարի դէմ Կորդուաց Զոն իշխանին, Մեծ Ծոփաց Մար իշխանին, Շահէի Ծոփաց Ներսէհ իշխանին, Սիւնեաց Վաղինակ նահապետին, Հաշտենից Դատ և Բասենի Մանակ իշխաններին իրենց գնդերով, արքունի զօրքով և Վաչէ սպարապետի հրամանատարութեամբ: Աղձնեաց զօրքը սոսկալի ջարդ կրեց, բազմաթիւ հայ կտրիճներ ընկան իրենց հարազատների սրից, ճակատամարտի մէջ ընկաւ ինքը՝ Բակուր բղեշի, մնացած գնդերը ցիրուցան եղան, Աղձնեաց իշխանական ամբողջ տունը կոտորածի մատնուեց:

Այս յաղթութիւնը եղաւ Վաչէ սպարապետի վերջին գործը: Պարսիկները նոր ուժով մըտան Հայաստան, արիւնահեղ ճակատամարտի մէջ ընկաւ Մամիկոննեան իշխանն ուրիշ մեծ նախարարների հետ, թագաւորը, ամբողջ զօրքը և բոլոր ժողովուրդը սուգ մտան, ողբում էին քաջներոսի մահը, հայոց աշխարհի մեծ կորուստը:

Վրթանէս հայրապետը մխիթարում էր որպաւորներին. «մխիթարուեցէք, ասում էր նա, որովհետև մեր քաջերը մեռել են հայրենիքի և եկեղեցու պաշտպանութեան համար: Մինչ կենդանի էին, զիշեր ցերեկ աքնում ու վաստակում

էին աշխարհի ազատութեան ու բարօրութեան համար, որին և զոհեցին իրենց կեանքը. ուստի և արժանի են Քրիստոսի վկաների դասը դասուելու:»

Ծերունի հայրապետը կարգ սահմանեց, որ իւրաքանչիւր տարի նրանց յիշատակը տօնուի և նրանց անունները յիշուին սուրբ սեղանի առաջ պատարագի ժամանակ:

Իւր հաւատարիմ և սիրելի սպարապետից յետոյ Խոսրով արքան երկար չապրեց: Ընդունուած սուգը կատարելով, նրա մարմինը տարան Դարանաղեաց գաւառի Անի բերդը և թաղեցին իւր նախնեաց դամբարանում:

## 2.

Լուսաւորչի ջանքերով քրիստոնէութիւնը տարածուել էր Հայաստանում և հիմնուել էր քրիստոնէական եկեղեցի, բայց հեթանոսական հաւատալիքներն ու բարքերը այնքան խոր արմատներ էին ձգել, որ կարճ ժամանակում չէին կարող մոռացուել, անհետանալ: Քրիստոնէութիւնն ընդունել էին իրեւ արտաքին պաշտամունք, առանց ներքին համոզմունքի. հայեացքներն ու կեանքը միանգամայն հեթանոսական էին: Ռամիկ ժողովուրդն անուսում էր, անգրագէտ, հայերէն զիր ու զրքեր չկային, յունարէնն ու ասորերէնն անհասկանալի էին, եկեղեցում

կարդացուած զրքերը և օտար հոգեորականների քարոզները նրանց սրտի հետ չէին խօսում, նըրանց մէջ քրիստոնէական ոգի և զգացում չէին արծարծում. հայի միտքը կաշկանդուած էր հեթանոսական հաւատալիքների և աւանդութիւնների կուռ շղթաներով:

Հայը չէր մոռացել իւր սիրելի դիւցազներին, ոգեսորւում էր նրանց առասպելներով, հըրձուում էր վիպասանական երգերով, զուարձանում էր գինով, երաժշտութեամբ ու գուտաններով: Քրիստոնէութիւնը քարոզած պարզ, ողջախոհ կենցաղն անսովոր էր նրան և անտանելի. հեղութեան և սիրոյ պատուէրները խորթ էին նրա համար, ներողամտութիւնն ու խոնարհութիւնը թուլութիւն ու երկչոտութիւն էին համարւում, վրէժինդրութիւնը՝ քաջութիւն: Ժողովուրդը չէր կարող բաժանուել իւր նախկին աստուածներից, զեռ շատ տեղերում տօնում էին նրանց տօները, հեթանոսական արարողութիւն ու պաշտամունք էին կատարում, մինչև իսկ զոհ էին մատուցանում նրանց: Խշխաններն ու թագաւորն ազատութիւն էին տալիս կրքերին, անձնատուր էին լինում հեշտութիւնների, անզթօրէն խողխողում էին իրենց թշնամուն, չէին խնայում նոյն իսկ կանանց և երեխաններին:

Կար միայն մի դասակարգ, որ մոլեռանդ թշնամի էր այն ամենին, ինչ որ հեթանոսական էր. հոգեորական դասն էր այդ, սկզբնական խըս-

տակրօն հոգևորականութիւնը, որ կատաղի կոիւ  
էր մղում աշխարհային ապականութեան ու գայ-  
թակղութիւնների դէմ: Նրանց քարոզները ձանձ-  
րացնում էին կեանքն ու աշխարհը սիրող մարդ-  
կանց, ուստի և արհամարհում ու ատում էին հո-  
գեոր հայրերին: Սակայն նրանք չէին վհատում.  
քրիստոնէութեան նախնական քարոզիչների նա-  
խնաձախնդրութեամբ լցուած, նրանք հաւասա-  
րապէս յանդիմանում ու նախատում էին ռամ-  
կին, իշխանին և թագաւորին:

Վրթանէսից յետոյ հայրապետական աթոռը  
բարձրացաւ նրա որդին՝ Յուստիկ: Երիտասարդ  
էր նա, առողջ, բարձրահասակ, գեղեցկադէմ և  
փայելչակազմ, խստակրօն, անվախ և համարձակ:  
իւր կոչմանը հաւատարիմ, շարունակ յանդիմա-  
նում էր իշխաններին և թագաւորին նրանց անօ-  
րէն գործերի պատճառով, մինչև իսկ արգելում  
էր նրանց եկեղեցի մտնել, անարժան համարե-  
լով Աստծու տաճարը ոտք կոխելու:

Արքայական գահի վրայ էր Խոսրովի որդին  
Տիրան, որ զուրկ էր հօր առաքինութիւններից  
և իւր անզիտութիւններով վրդովում էր Երկրի  
խաղաղութիւնը: Թշնամութիւնը գնալով սաստ-  
կանում էր կաթուղիկոսի և թագաւորի մէջ, մի  
տօն օր, երբ թագաւորը մեծամեծներով շրջա-  
պատուած եկաւ եկեղեցի, Յուստիկ հայրապետն  
արգելեց նրան այսպիսի խօսքերով.

— Արժանի չես, ինչու ես գալիս, մի մտնիր  
Աստծու տունը:

Սաստիկ զայրացաւ թագաւորը կաթողիկո-  
սի յանդգնութեան վրայ: Նրա հրամանով երի-  
տասարդ հայրապետին քաշ տուին եկեղեցու մէջ,  
սաստիկ ծեծեցին և կիսամահ թողին: Անցքը  
պատահեցաւ Ծոփաց գաւառի Բնաբեղ բերդի  
պալատական եկեղեցում. պաշտօնեաները վերց-  
րին արիւնլուայ մահամերձ կաթողիկոսին, տա-  
րան Դարանաղեաց գաւառի Թորդան գիւղը, որ-  
տեղ քիչ օրերից յետոյ մեռաւ և թաղուեց իւր  
հայրերի մօտ: Նոյնպիսի եղերական վախճան ու-  
նեցաւ ծերունի Դանիէլ եպիսկոպոսը, որ հա-  
մարձակուել էր յանդիմանել թագաւորին այս  
անօրէն գործի համար:

Սոսկալի խոռվութիւնները նորից սկսեցին  
տակն ու վրայ անել Հայաստանը. ոչ միայն  
թշնամին թշնամու, այլև բարեկամը բարեկամի  
դէմ էր զինուած, միմեանց մատնում ու դաւա-  
ճանում էին: Թագաւորն անզօր էր երկառա-  
կութիւնները վերջացնելու. ընդհակառակը՝ իւր  
անզիտութիւններով աւելի ևս բորբոքում էր կըր-  
քերն ու տաելութիւնները:

Մի անօրէն ու չարասիրտ մարդ զբգուում  
էր Տիրան թագաւորին նախարարական տների  
դէմ. արքայական պալատի ներքինապետն էր  
նա, մեծ ազդեցութիւն ունէր թագաւորի վրայ,  
նրա մերձաւոր խորհրդականն էր, պալատական

բոլոր գործերի կարգադրողը և կոչւում էր Հայր Մարդպետ։ Սա զրպարտութիւններով կոտորել տուեց նախարարներից շատերին, ովքերիմ թշշնամի էր երկու աւագ տոհմերի՝ Ռշտունեաց և Արծրունեաց և այնքան չարախօսութիւն արեց նրանց վրայ, որ թագաւորի հրամանով այդ երկու հնագոյն փառաւոր իշխանական տները կոտորել տուեց։ Մամիկոնեան իշխանները՝ Արտաւագդ և Վասակ խլեցին մանուկներին դահիճների ձեռից։ Ռշտունեաց տոհմից Մեհնդակի որդի Տաճատին, իսկ Արծրունեաց ցեղից Վաչէի որդի Շաւասպին, փախցրին տարան Տայոց աշխարհը, և այնտեղ իրանց սեփական ամրոցներում պահում ու մեծացնում էին դժբաղդ տների շառավիղներին։

Երբ էր զօրավար կարգուել Վասակ Մամիկոնեան, չգիտենք. առաջին անգամ նա հանդէս է գալիս այն իշխանների շարքում, որոնք Յուսիկ կաթողիկոսի եղերական մահից յետոյ Փառէն երկցին տարան կեսարիա եպիսկոպոս ձեռնադրել տալու։

Մարմնով փոքրիկ, Վասակ իւր մէջ կրում էր մի վեհ հոգի. անպարտելի հերոս ուազմի դաշտում, անվեհեր և աներկիւղ թշնամու դէմ, նա հլու հնազանդ էր թագաւորի հրամաններին և նրա անձի ու աշխարհի պաշտպանութեան համար պատրաստ էր կեանքը զոհելու։ Նա սարսափ էր ազդում Հայաստանի թշնամիներին, յոյս

և ոգի էր ներշնչում հայոց զօրքին ու իշխաններին. Մամիկոնեան տոհմի արժանաւոր շառաւիդն էր Վասակ իշխանը, որ կարգուած էր հայոց բանակի սպարապետ և արքունի գնդերի զօրավար։

Մի այնպիսի ժամանակ, երբ ներքին կը-ոփիւներն ալեկոծում էին աշխարհը, ծծում էին հայոց երկրի բոլոր հիւթերը, երբ թագաւորը կորցրել էր իւր հեղինակութիւնը, երբ փոխադարձ ատելութիւնն ու ովքերիմ թշնամութիւնը սպառում էին նախարարական տոհմերը, — հաւատարիմ սպարապետը համնում էր Հայաստանի մի գաւառից միւսը, հաշտեցնում էր կոռուզներին, պատժում էր անհնազանդներին, աշխատում էր երկիրը խաղաղացնել և արքայական գահը պահպանել։

Վասակ և իւր եղբայրն Արտաւագդ այնքան էին վայելում թագաւորի վստահութիւնը, որ սա կարգել էր նրանց իւր Արշակ որդու դաստիարակ։ Նրանք համակիր չէին թագաւորի և իշխանների անօրէն գործերին. և երբ մոլեգնութիւնն այն աստիճանի հասաւ, որ թագաւորը կոտորել տուեց Արծրունի և Ռշտունի ցեղերին, և Մամիկոնեան եղբայրները չկարողացան աղէտի առաջն առնել, թողին իրենց սան Արշակին, հեռացան արքունիքից ու պետական գործերից, քաշուեցան Տայոց աշխարհի ամրոցները և երկար ժամանակ այլ ևս չէին խառնւում հայոց գործերին։

Մինչ Մամիկոնեան վասակ պետական գործերից հեռացած, նստած էր իւր տոհմական ամբողում, Հայոց աշխարհում ողբալի անցքեր անցան:

Այդ ժամանակ Ատրպատականում նստում էր պարսից կուսակալը, որին յանձնուած էր մօտիկից հսկել Հայաստանի վրայ. նրա միջոցով էին կատարում պարսից և հայոց յարաբերութիւնները:

Տիրան թագաւորը իւր սենեկապետ Փիսակին դեսպան ուղարկեց Ատրպատականի Շապուհարազ կուսակալի մօտ: Թագաւորը բարեկամական յարաբերութիւնների մէջ էր յոյների հետ, բայց և չէր ուզում պարսիկներին գրգռել իւր դէմ, ուստի և աշխատում էր նրանց հետ և լաւ յարաբերութիւն պահպանել: Ինչ ոխ, կամ ինչ թշնամութիւն ունէր Փիսակ թագաւորի դէմ, յայտնի չէ. Ատրպատական հասնելով, նա ամբաստանութիւն արեց Տիրանի վրայ, իբրև թէ մտադիլ է յոյների օգնութեամբ պարսից թագաւորութիւնը խել Սասանեան ցեղից և վերադարձնել Պահլաւ ցեղին: Կուսակալը հաղորդեց այս մասին Շապուհ արքային, որ և

Շապուհվարազ դեսպան ուղարկեց Տիրանի մօտ և յայտնեց, որ ցանկանում է գալ նրա

մօտ հիւր, բարեկամական կապերն աւելի ևս ամբազնդելու համար: Տիրան սիրով ընդունեց նրան և մեծ պատիւներով հիւրասիրեց: Նախարարներից շատերը վաղուց հեռացած էին թագաւորից, նրա մօտ կային փոքրաթիւ գնդեր միայն, հեռուէր նաև թագաւորի հաւատարիմ պաշտպանը՝ Մամիկոնեան վասակ: Խորամանկ պարսիկը իւր հետ ունէր երեք հազար մարդ, զինուած ու պատրաստ:


Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Ապահուաց գաւառում, որ տարածւում էր Արածանու ափերին: Թագաւորը մի քանի օր շարունակ խնջոյքներով, ձիարշաւներով ու որսով զբաղեցնում էր իւր պատուաւոր հիւրին: Նա ոչինչ կասկած չէր կարող ունենալ այն մարդու վրայ, որ եկել էր թանկագին ընծաներով իբրև բարեկամ և իւր յարկի տակ հիւրասիրութիւն էր վայելում: Թագաւորի մօտ էին փոքրաթիւ սպասաւորներ, որսորդներ և ունվիրայ մարդիկ, մեծ ափկինը և գաճի ժառանգը՝ Արշակ արքայորդին: Հայոց թագաւորի մեծարանքները վայելով, պարսիկ իշխանն ինքն էլ հրաւիրում էր նրան հացկերոյթի: Մի անգամ, ընթրիքի ժամանակ, երբ միամիտ թագաւորը և նրա հետևորդները հարբել էին, յանկարծակի վրայ հասան թագնուած զինորները, ըլջապատեցին նրանց, բըռնեցին Տիրան թագաւորին, ձեռներն ու ոսները շղթայով կապեցին, աւարի առան արքայական ստացուածքն ու գանձերը, բոնեցին նաև թա-

գաւորի կնոջը, Արշակ արքայորդուն և միւս  
որդիններին և ամենքին գերի տարան Պարս-  
կաստան։ Երբ հասան Դալարիս անունով մի  
գիւղ, երկաթը շիկացրին ածուխի վրայ, նրանով  
հանեցին թշուառ թագաւորի աչքերը և այնպէս  
տարան պարսից երկիրը։

Սոսկալի եղեռնագործութեան լուրը կայ-  
ծակի արագութեամբ տարածուեց հայոց աշխար-  
հի բոլոր գաւառները, Եկան հաւաքուեցան նա-  
խարարները, զօրափարները և բազմաթիւ ժողո-  
վուրդ։ Իսկոյն գնդեր կազմեցին, ընկան պար-  
սիկների ետևից, բայց արդէն ուշ էր. չկարողա-  
ցան նրանց հասնել, յետ դարձան, սգացին իրենց  
բնիկ տիրոջ կորուստը, հայոց երկրի աւերումը,  
իրենց անտէրութիւնն ու թշուառութիւնը։

Այս աղէտալի դէպքը ցնցեց, սթափեցրեց  
հայ իշխաններին և նրանց մէջ, գոնէ առժամա-  
նակ, վառեց միաբանութեան ողին։ Ոխն ու  
ատելութիւնը մոռացուեցան, նոյն իսկ պար-  
սից կողմանակից նախարարները կատաղութեամբ  
լցուեցան դէպի նենդաւոր պարսիկները և միա-  
ցան իրենց հակառակորդների հետ։

Երկիրը ճգնաժամի մէջ էր, փոխադարձ  
հակառակութիւններն ու կոփիւնները կարող էին  
վերջին հարուածը տալ Հայաստանի անկախու-  
թեանը։ Հարազատ թագաւորը իւր բոլոր անզթու-  
թիւններով միասին աւելի լաւ էր քան օտարը։  
Իշխանները եթէ ուզում էին պահել իրենց ան-

  
Կախութիւնն ու իրաւունքները, պէտք է պահպա-  
պանէին թագաւորի իշխանութիւնը. այս լաւ էին  
գիտակցում նախարարները, ուստի և ժողով-  
ուեցան գրութեան մասին խորհրդակցելու։

—Ինչու ենք սգում և անգործ նստում, ա-  
սում էին նրանք, թշնամին այսպիսով ժամանակ  
կը վասակի և մեզ վբայ կը յարձակուի մեր երկ-  
րում, մեր տան մէջ։ Միաթարենք ու քաջա-  
լերենք միմեանց, պահպաննենք մեզ և աշխա-  
տենք մեր տիրոջ կորստեան վրէժը լուծել։

Նրանք աեսնում էին, որ իրենց ոյժը չըն-  
չին է պարսից ահեղ զօրութեան առաջ. իրենց  
սեփական գնդերով չէին կարող պաշտպանել  
երկիրը պարսից ահաւոր բանակի արշաւանքնե-  
րից։ Հիւսիսումն էր փոքրիկ Վրաստանը, որ նոյն-  
պէս անզօր էր վիթխարի Պարսկաստանի առաջ։

Ի՞նչ անէին, ում դիմէին։ Միակ յոյսը մնա-  
ցել էր արևմտեան քրիստոնեայ պետութեան՝  
Բիւզանդական կայսրութեան վրայ, որի սեփա-  
կան շահը պահանջում էր պաշտպանութիւն  
ցոյց տուլ Հայաստանին Սասանեան հզօր պէ-  
տութեան դէմ։

Նախարարական խորհուրդը միաձայն որո-  
շեց դիմել յունաց կայսրին։ Միւնեաց Անգովկ  
իշխանին և կամսարական Արշաւիր նահապետին  
թանկագին ընծաներով և նախարարական ժողովի  
թղթերով ուղարկեցին կոստանդնուպոլիս, կոս-  
տանդ կայսեր մօտ, օգնութիւն խնդրեցին և

խոստացան հաւատարմութեամբ ծառայել նրան:

Պատգամաւորները ճանապարհ ընկան դէպի Կոստանդնուպոլիս, դիմեցին կայսերական պալատը և ներկայացրին նախարարական ժողովի հրովարտակն ու ընծաները: Կայսրը սիրով ընդունեց նրանց և խոստացաւ օգնել հայոց աշխարհին:

Դեռ պատգամաւորները Կոստանդնոպոլսից չէին վերադարձել, պարսկական բանակը մտաւ Հայաստան և ասպատակ սփռեց ամեն կողմ: Նախարարներն ուժ չունեին թշնամու մուտքն արգելու, ուստի ամեն մէկն առաւ իւր ընտանիքը և փախաւ Յունաստան: Կոստանդ կայսրը յունական բանակն ուղարկեց պարսից վրայ, նրան միացան հայ իշխաններն իրենց գնդերով, պարսիկներին դուրս բշեցին Հայաստանից: Շապուհ արքան ստիպուեց հաշտութիւն ինդրել, Կոստանդ համաձայնեց այն պայմանով, որ պարսից թագաւորը վերադարձէ Տիրանին իւր ամբողջ ընտանիքով և ստացուածքով Հայաստան: Արքայից արքան Տիրանին արձակեց բանափառ կապանքներից, տուեց նրան արքայական թագը և պատուով ուղարկեց Հայաստան: Սակայն Տիրան աչքի լուսից զրկուած, չէր կարող այլ ևս թագաւորական իշխանութիւնը վարել, ուստի և հրաժարուեց գահից: Նրա ինդրանոք Շապուհ հաստատեց Հայաստանի գահի վրայ նրա որդի Արշակին, 351 թուին:

4.

Արշակ թագաւորը երիտասարդ էր, եռանդուն և քաջ։ Նրա առաջին տարիներում ուժապառ Հայաստանը փոքր ինչ հանգիստ վայելց։ Խաղաղութիւն ու ապահովութիւն եղաւ մեր երկրում, իրենց անառիկ ամրոցներում թագնուած իշխանները լոյս աշխարհ դուրս եկան, փախած, ցիրուցան եղած նախարարները վերադարձան հայրենիք, տէր դարձան իրենց կիսաւեր բերդերին ու կալուածներին, շըջապատեցին երիտասարդ թագաւորին։ Աւերակները նորոգուեցան, քարուքանդ երկիրը նորից շէնացաւ, չարատանջ ժողովուրդն ազատ շունչ քաշեց, սկսեց իւր սովորական խաղաղ աշխատանքը. վարում էին, ցանում, քրտինք էին թափում հայրենի հողը պտղաբեր անելու և հանգիստ ու ապահով վայելում էին իրենց աշխատանքի պըտուղը:

Երկու հզօր պետութիւնները՝ Պարսկաստանն ու Յունաստանը հաշտութիւն էին կնքել, ուստի Հայաստանը երկիւղ չուներ արտաքին յարձակումներից:

Օգտուելով խաղաղութիւնից, Արշակ թագաւորը նուիրուեց երկրի բարեկարգութեանը: Նրա նախորդների օրով Հայաստանի թշուառութիւնների գլխաւոր պատճառը եղել էին նախարարների ներքին կոիւները, դաւաճանութիւն-

ներն ու ապստամբութիւնները. ուստի և նա ձեռնարկեց նախ և առաջ նախարարական իշխանութիւնները կարգ ու կանոնի ենթարկելու: Որոնեց Մամիկոնեան իշխաններին, որոնք իւր դաստիարակներն էին եղել, գտաւ նրանց Տայոց նահանգի անմատչելի լեռների ամրոցներում, որտեղ ապրում էին երկար ժամանակից ի վեր հայոց գործերից հեռացած, բերեց նրանց իւր մօտ, արժանացրեց արքայական վստահութեան, երէց եղբօրը՝ Վարդանին կարգեց Մամիկոնեան տան նահապետ, Վասակին՝ հայոց ընդհանուր բանակի սպարապետ և արքունի գնդերի զօրավար, իսկ կրտսեր եղբօրը՝ Վահանին նշանակեց զինւորական գործերի վրայ:

Հայաստանի սահմանների վրայ կարգեց սահմանապահ իշխաններ, ապստամբ իշխաններին, որոնք իրենց զօրագնդերով հեռացել էին արքունի ծառայութիւնից, հնազանդեցրեց իւր իշխանութեանը, թողնելով իւրաքանչիւրին իւր տոհմական երկիրը: Իշխաններից ամեն մէկը պէտք է տիրէր իւր գաւառին, կառավարէր իւր սեպհական հողի վրայ ապրող ժողովուրդը, պահէր իւր գնդերը, բայց բոլորը պիտի ճանաչէին թագաւորի վերին իշխանութիւնը և հպատակէին նրան, կատարէին նրա օրինաւոր հրամանները և ընդհանուր գտանգի ժամանակ իրենց գնդերով պիտի գային, միանային արքունի զօրքին և միասին գնային պատերազմ:

Հայաստանի գաւառներում երկրի շինութեան ու բարեկարգութեան վրայ հսկելու համար նշանակեց գործակալներ, որոնք պիտի ենթարկուէին ընդհանուր կամ գլխաւոր գործակալին, որ կոչւում էր հազարապետ, կամ խնամակալ Դեհկան. այս մեծ պաշտօնը տուեց Գընունեաց ցեղի իշխանին:

Քանի որ հայոց թագաւորը պարսից արքայից էր ստացել թագը, յոյները կարող էին կասկածով վերաբերուել նրան: Արևմուտքի հետ ևս բարեկամական յարաբերութիւն պահպանելու համար Արշակ ամուսնացաւ կայսերական տոհմից Ոլիմպիա անունով մի աղջկայ հետ: Իշխանազն օրիորդի հետ կոստանդ կայսրը Հայաստան ուղարկեց Արշակի եղբօրորդիներին՝ Գնէլին և Տիրիթին, որոնք Տիրանի ժամանակից կոստանդնուպոլսում պատանդ էին:

Այսպիսով, երիտասարդ և եռանդուն Արշակ թագաւորի օրով և նրա ջանքերի շնորհիւմեր երկիրը խաղաղուեց ու բարեկարգուեց: Նորոգուեց ու զուարճացաւ հայոց աշխարհը, ասում է ժամանակակից պատմիչը Փաւստոս, ինչպէս առաջ էր. մեծամեծներն իրենց գահերի վրայ և գործակալներն իրենց պաշտօնների գլուխը: Իրաւունք և արդարութիւն էր թագաւորում հայոց երկրում: Թագաւորը շարունակ հոգում էր երկրի բարօրութեան ու խաղաղութեան համար,

ժողովուրդը հանգիստ ապրում էր բնիկ տէրերի  
հովանաւորութեան ներքոյ:

5,

Հայոց աշխարհին վիճակուած չէր յարատե  
հանգիստ վայելել. մի թեթև առիթ բաւական  
էր կրքերը բորբոքելու և խաղաղութիւնը վրդո-  
վելու, և առիթը շուտով ներկայացաւ:

Միւնեաց Անդովկ իշխանը մի գեղեցիկ  
դուստր ունէր Փառանձեմ անունով: Նրա չքնաղ  
գեղեցկութեան համբաւը տարածուած էր ամ-  
բողջ Հայաստանում: Արշակի եղբօրորդին՝ Գնէլ,  
որ նոր էր վերադաել կոստանդնուպոլսից,  
ամուսնացաւ իշխանազն օրիորդի հետ: Երիտա-  
սարդ ամուսինները գրաւեցին հայոց ազատանու-  
աէրն ու յարգանքը. արքայազն իշխանի տունը  
ամեն կողմից գրաւում էր հայոց նախարարներին,  
որոնք նրանց խաղաղ ընտանեկան յարկի տակ  
սիրալիր ընդունելութիւն էին գտնում. ուստի և  
Գնէլ հետզհետէ սիրելի էր դառնում հայ իշ-  
խաններին, և ազնուազարմ սեպուհները յաճախ  
երթենկում էին նրա մօտ, մասնակցում էին  
խնճոյքներին, որսերին ու արշաւներին:

Մինչ երիտասարդ զոյգը խաղաղ ընտանե-  
կան կեանքի քաղցրութիւններն էր վայելում,  
մինչ բաղդն ու երջանկութիւնը ժպտում էին  
նրանց, յանկարծ մի սարսափելի ընտանեկան:

փոթորիկ բարձրացաւ, որին զոհ գնաց դեռահաս  
արքայազն Գնէլ, և որը ճակատագրական եղաւ  
Արշակ թագաւորի համար

Գնէլի հօրեղբօր որդին Տիրիթ յափշտակ-  
ուեց Փառանձեմի դիւթիչ գեղեցկութեամբ և  
սիրահարուեց նրա վրայ. նա աշխատում էր  
Գնէլին կորցնել և Փառանձեմի հետ ամուսնա-  
նալ: Սէրը կուրացրել էր նրան, իւր նպատակին  
հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չէր  
դնում: Օգնականներ էր վարձել, որոնք նրա թե-  
լադրութեամբ չարախօսութիւն էին անում Գնէ-  
լի մասին թագաւորի առաջ:

— Տէր թագաւոր, ասում էին նրանք, բոլոր  
աւագանին ու նախարարները սիրում են Գնէլին  
և ցանկանում են, որ նա թագաւորէ իրենց  
վրայ. զգոյշ եղիր, տէր արքայ. իմացիր քո ա-  
նելիքը, պահպանիր քո կեանքն ու թագաւորու-  
թիւնը:

Ամբաստանութիւններն ազգեցին Արշակի  
վրայ, կասկածը բուն դրեց նրա սրտում և գնալով  
մեծ ծաւալ էր ստանում: Գնէլի ուրուականը նրան  
հանգիստ չէր տալիս, և նա առիթ էր որոնում  
արքայազն երիտասարդին կորցնելու:

Նաւասարդի տօները մօտենում էին: Հնա-  
ւանդ սովորութեամբ հայոց աշխարհի մեծամեծ  
իշխանները, տանուտէրերն ու սեպուհները տա-  
րեմուտին հաւաքւում էին Բագաւան, որ ընկած  
էր Ծաղկաց լեռների հիւսիսային ստորոտում,

Արածանու ավին: Քրիստոնէութիւնից առաջ այնտեղ էին հեթանոս հայերի աստուածների բագինները. այնտեղ էին հաւաքւում իւրաքանչիւր տարի Հայաստանի մօտաւոր ու հեռաւոր տեղերից անթիւ ժողովուրդ, գալիս էր թագաւորը, գալիս էին նախարարները և քրմերի ու քրմապետի մասնակցութեամբ, մեծ հանդէսներով կատարում էին Նաւասարդի տօնը: Այդ սրբազն վայրում Գրիգոր Լուսաւորիչ մկրտել էր Տրդատ թագաւորին միլիօնաւոր ժողովրդի հետ և, հեթանոսական այդ մեծ ազգային տօնին քրիստոնէական բովանդակութիւն տալու համար, սահմանել էր, որ նոյն տեղում Նաւասարդի սկզբին կատարուի սուրբ Յովհաննու տօնը: Արշակ յարմար առիթ համարեց օգտուել տօնական հանդէսների աղմուկից, կանչել իւր մօտ Գնէլին և ժխորի մէջ սպանել տալ:

Գնէլին արդէն յայտնի էր Արշակի չար դիտաւորութիւնը, ուստի և շատ զգոյշ էր և իրեն հեռու էր պահում թագաւորից: Արշակ իւր հաւատարիմ իշխաններից մէկին՝ Մամիկոնեան վարդան նահապետին յանձնեց Գնէլին մի հընարքով թագաւան հրաւիրել, Նաւասարդի հանդէսներին մասնակցելու:

Թագաւորական բանակն այդ ժամանակ գըտնւում էր Շահապիվանում, որ ընկած էր Բագաւանի մօտերը, Ծաղկաց լեռների ստորոտում. Շահապիվանն էր Արշակունի թագաւորների սու-

վորական բանակատեղը: Նրանից ոչ հեռու, Առաւիտոց գիւղում էր գտնւում այդ ժամանակ Գնէլը, Վարդան Մամիկոնեան գնաց Գնէլի մօտ, խորամանկութեամբ և երդումներով համոզեց, որ գայ Բագաւան, թագաւորի հետ Նաւասարդի տօնը կատարելու:

—Թագաւորն այլ ևս թշնամութիւն չի տածում դէպի քեզ, ասում էր Վարդան, նա չի հաւատում չարախօսներին. համոզաւել է, որ դու անմեղ ես, որ ինքն ի զուր է կասկածել քեզ վրայ, ուստի և զզջացել է և քեզ առաջուայ նման սիրում է: Նա չի կարող Նաւասարդի մեծ տօնն առանց քեզ կատարել, հրաւիրում է քեզ ընտանիքով ներկայ լինելու հանդէսներին:

Երիտասարդ էր Գնէլը և դիւրահաւան: Փորձուած, խորամանկ նահապետի անուշ լեզուն նրա կասկածը վարատեց: Իսկոյն նա ճանապարհ ընկաւ իւր կնոջ հետ միասին Շահապիվան գնալու, ամբողջ գիշերն անդադար գնում էին, որ առաւօտեան տեղ հասնեն, միւս օրը կիրակի էր, և հանդէսները պիտի կատարուէին:

Աղօթարանը նոր էր բացուել, երբ Գնէլ հասաւ արքունական բանակը: Հէնց որ թագաւորին իմաց տուին, իսկոյն հրաման արեց բանակից դուրս տանել նրան և ծածուկ սպանել: Գնէլ հեծած իւր նժոյգը, համարձակ առաջ անցաւ բանակի միջով և մօտեցաւ հրապարակին, որ

ընկած էր արքայական վրանի առաջ: Այդ ըուպէին արքունիքից դուրս եկտն հետևակ մարդիկ, սրերով, նիզակներով և ասպարներով զինուած: մօտեցան, քաշեցին, ձիուց վայր ձգեցին միամիտ երիտասարդին, ձեռները մէջքին կապեցին և տարան բանակից դուրս գլխատեցին:

Գնէլի սպանման լուրը կայծակի արագութեամբ տարածուեց բանակի մի ծայրից միւսը, եկան հաւաքուեցան իշխաններն ու զօրականները, կատաղած բազմութիւնը իւր սիրելի արքայազն իշխանի մահուան վրէժն էր պահանջում: իւր չարագործութիւնը ծածկելու համար Արշակ հրամայեց, որ ամենքը սուգ անեն Արշակունի մեծ սեպուհի վրայ: Ինքը՝ թագաւորը նոյնպէս մասնակցում էր սգոյ արարողութեանը. նա նստած լաց էր լինում ու ողբում էր իւր եղբօրորդու կորուստը:

Գնէլի գեղեցիկ կինը՝ չքնաղ Փառանձեմը պատառտած շորերով, հոլանի կրծքով, արձակ մազերն ուսերի վրայ փռած, բարձր ձայնով աղիողորմ լաց էր լինում, դառն արտասուք էր թափում իւր սիրելի ամուսնի դիակի վրայ. անմիթար կնոջ լացն ու հեկեկանքը շարժում էր ամենքի սիրտը. բազմութիւնը շրջապատել էր դիակը և ողբում էր թանկագին իշխանի կորուստը:

Վիշտն ու կսկիծն աւելի գրաւիչ էին դարձել չքնաղ Փառանձեմին. Արշակ հրապուրուեց

նրա շլացուցիչ գեղեցկութիւնով և ցանկացաւ նրան կին առնել:

Տիրիթ, առանց սպասելու սուգի օրերն անցնելուն, մարդ ուղարկեց Փառանձեմի մօտ, յայտնեց, որ սիրում է նրան և խնդրեց նրա ձեռքը:

Գաղտնիքը բացուեց. ամենքի համար պարզուեց, որ Տիրիթն է եղել Գնէլի սպանութեան բուն պատճառը: Ողբասաց կանայք սկսեցին երգել Տիրիթի սիրահարութիւնը, քսութիւնը, չարախօսութիւնը, Գնէլի եղերական մահուան հանգամանքները, Փառանձեմի վիշտն ու սուգը: Այս ամենը բարձր ձայնով երգում ու լալիս էին ողբասաց կանայք, որոնց մէջ էր և ինքը՝ Փառանձեմ:

Նոյն ժամանակ Տիրիթ պատգամաւոր ուղարկեց թագաւորի մօտ, յայտնեց իւր դիտաւորութիւնը և հրաման խնդրեց Փառանձեմի հետ ամուսնանալու:

Թագաւորն այժմ ամեն ինչ հասկացաւ, բայց արդէն ուշ էր. նա տեսաւ, որ Գնէլի սպանութեան պատճառը Տիրիթն է, որ ինքը կոյր գործիք է եղել մի քստմնելի դաւաղրութեան, տեսաւ այս ամենը, սոսկալի ատելութեամբ լըցուեց դէպի իւր նենգաւոր եղբօրորդին և վըճուեց նրան ևս կորցնել: Թագաւորի մտադրութիւնը ծածուկ չմնաց Տիրիթին. իւր կեանքն ձարելու համար նա գիշերով փախաւ արքունի բանակից, սակայն զինւորները Արշակի հրա-

մանով ընկան նրա ետքից, բռնեցին նրան Բասեն գաւառի անտառում և տեղն ու տեղն սպանեցին:

Սոսկալի ոճիրների տպաւորութիւնը դեռ չէր անցել, երբ Արշակ Փառանձեմին տարաւ արքունիք և իրեն կնութեան առաւ: Արքայական փառքով ու ճոխութեամբ շրջապատուած, Փառանձեմ կարծես մոռացաւ իւր առաջին սէրը: Սակայն նրա երջանկութեանը և փառասիրական ձգտումներին խոչընդուռ էր Արշակի առաջին ամուսինը՝ յունական կայսերազն Ոլիմպիան, որ իսկական թագուհին էր: Սիւնեաց իշխանի փառասէր դստեր համար քիչ էր թագաւորի կին լինել. նա ձգտում էր նաև Հայաստանի թագուհի լինել, ուստի և սաստիկ նախանձում էր Ոլիմպիային և հնար էր որոնում նրան մեռցնելու: Ոլիմպիան նկատում էր Փառանձեմի նախանձն ու ատելութիւնը և շատ զգոյշ էր. ուտում էր միմիայն իւր նաժիշտների պատրաստած կերակուրը և խմում էր նրանց պարզած գինին: Սակայն հնարագէտ Փառանձեմը կարողացաւ իւր նպատակին համել. նա գտաւ տարօնեցի մի երէց Մըջիւնիկ անունով, որ յանձն առաւ կատարել դժոխային մի գործ: Աստծու այդ անարժան պաշտօնեան թոյն խառնեց հաղորդութեան բաժակի մէջ և տուեց Ոլիմպիային և իւր ծառայութեան իրեկ վարձատրութիւն ստացաւ Գոմէկունք գիւղը Տարօն դաւառում:

Արքունիքի շուրջը կատարուած այս ոճիրները նորից վրդովեցին Հայաստանի խաղաղութիւնը. մեր աշխարհը նորից երկարատես կատաղի կոիւների ասպարէզ դազձաւ, և Արշակ այլ ևս գանի վրայ հանգիստ չփայելեց:

## 6.

Հայոց իշխանները, որոնց մէջ կենդանի էր անկախութեան և ըմբոստութեան ողին, տեսնելով թագաւորի գործերը, նորից գլուխ բարձրացրին: Հետզհետէ սկսեցին հեռանալ թագաւորից, քաշուել, առանձնանալ իրենց սեփական գաւառներում և անմատչելի բերդերի մէջ ամուր գիրք բռնել: Թագաւորին հաւատարիմ Մամիկոնեան իշխանները ներքին, ընտանեկան խոռվութիւններով էին զբաղուած. հարազատ եղբայրներն ատելութեամբ լցուած էին իրար դէմ և իրարից բաժանուած: Վարդան Մամիկոննեանի ջանքերով Արշակ բարեկամութեան դաշն էր կնքել պարսիկների հետ և ուխտել էր նրանց հաւատարիմ մնալ: Փաւստոսի պատմածներից երեւում է, որ Վարդան Մամիկոննեան համակրող ու կողմնակից էր պարսիկներին, ուստի և գրաւել էր Շապուհարքայի սէրն ու վատահութիւնը, իսկ եղբայրը՝ Վասակ սպարապետ ատում էր պարսիկներին: Տիսուր անցեալի դառն փորձերը նըրան համոզել էին, որ պարսիկները երբէք ան-

կեղծ բարեկամ չէին կարող լինել, որ նրանք չէին կարող հաշտ աչքով նայել Հայաստանի անկախութեանը, և որ նրանց աւանդական ձըգտումն էր վերջ դնել հայոց թագաւորութեանը և Հայաստանը դարձնել պարսից ընդարձակ պետութեան մի նահանգ։ Այսպէս էր համոզուած Վասակ Մամիկոնեան, ուստի և հակառակ էր իւր եղբօր բռնած ընթացքին։ Գուցէ ուրիշ, զուտ ընտանեկան պատճառներ էլ կային, որ մեզ յայտնի չեն։ Հակառակութիւնն այն աստիճանի հասաւ, որ ոխերիմ թշնամութեան փոխուեց, և Վասակ պատրաստ էր իւր եղբօր կեանքը զոհելու, եթէ այդ պահանջէր հայրենիքի բարօրութիւնը և իւր բնիկ տիրոջ ապահովութիւնը։ Վարդանի ջանքերին հակառակ, Վասակ աշխատում էր միշտ հեռու պահել թագաւորին պարսիկների ազգեցութիւնից։

Շապուհ արքան շատ էր ցանկանում բարեկամանալ հայոց թագաւորի հետ և նրան հեռացնել յոյներից։ Նրա յանձնարարութեամբ Մամիկոնեան տան Նահապետը՝ Վարդան եկաւ Արշակ մօտ, բերեց արքայական հրովարտակը, որով Շապուհ հրաւիրում էր հայոց թագաւորին իւր բարեկամութեան ուխտին հաւատարիմ մընալու։ Արշակ սիրով ընդունեց հրովարտակը, իսկ Վարդանին արձակեց, որ գնայ իւր աշխարհը, իւր յարկի տակ հանգիստ վայելէ։

Նոր էր հեռացել Վարդան, երբ թագաւորի

մօտ եկաւ Վասակ Մամիկոնեան և լսելով իւր եղբօր պատգամաւորութեան մասին, զգուշացրեց թագաւորին ասելով.

— Տէր արքայ, Վարդանն ուզում է քեզ մատնել պարսից թագաւորի ձեռը և դրանով քեզ իսպառ կորցնել, եթէ նրան չսպանես, դու էլ կը կորչես, հայոց աշխարհն էլ։

Վասակի խօսքերը հաստատում էր Փառանձեմ թագուհին, որի սրտում ոխ էր մնացել Վարդանի դէմ այն օրից, երբ սա նենգութեամբ իւր ամուսնուն՝ Գնէլին տաքաւ Շահապիվան և ըսպանել տուեց։ Թագուհու և սպարապետի խօսքերն իրենց ազգեցութիւնն ունեցան. Վասակ թագաւորի հրամանով ուղեկորուեց Տայոց աշխարհը, իւր հարազատ եղբօրն սպանելու։

Մամիկոնեան տան նահապետը վաղուց հաել էր տուն և հանգիստ ապրում էր Տայոց գաւառի էրախանի բերդում, որ Մամիկոնեան տոհմի սեփականութիւնն էր։ Երբ լուր բերին, թէ Վասակ գալիս է, բերդում ոչինչ կասկած չունենալով, պատրաստուեցան ընդունելու։

Ամառուայ մի շող օր էր։ Բերդի մի կողմը՝ ձորի մէջ վրան էր խփած, որտեղ այդ ժամանակ Վարդան շորերը հանած, գլուխն էր լուանում։ Վասակ իւր զինւորներով մօտեցել էր վըրանի մուտքին։ Այդ ըսպէին Վարդան հէնց այն է կռացել էր, որ գլխին ջուր ածեն, զինւորները վրայ հասան, խփեցին, սպանեցին Մամիկո-

նեան իշխանին։ Իսկոյն լուրը տարածուեց բերդում, ամեն կողմ լաց ու աղաղակ բարձրացաւ։ Վարդանի կինը՝ Մամիկոնեան իշխանուհին նըստած էր սենեակում, գահաւորակի վրայ։ Նա ծանր յղի էր, և ազատուելու օրերը մօտեցել էին։ Երբ նրան լուր բերին, տեղից վերցատկեց, վաղեց դէպի դուռը, բայց չկարողացաւ դուրս գալ։ Նոյն ըռպէին ազատուեց, մի որդի ծնեց, որի անունը դրին վարդան։

Մամիկոնեան նահապետի սպանութիւնն աւելի ևս բորբոքեց նախարարների ատելութիւնը դէպի թագաւորը։ Ամեն կողմից ապստամբութեան փորձեր էին լինում, Հայաստանի միութեանն ու զօրութեանը վտանգ էր սպանում։ Արշակ և նրա հաւատարիմ սպարապետը՝ Վասակ ամեն ջանք գործ էին դնում թագաւորի կեդրոնական իշխանութիւնը զօրացնելու և նախարարների սպանացող ոյժը խորտակելու համար։ Գուցէ Հայաստանի օգուտն արդարեւ այդ էր պահանջում։ մի զօրեղ միապետի իշխանութեան տակ միացած, ընդհանուր ուժով, Հայաստանը թերես երկար կարողանար դիմանալ արեկից և արևմուտքից հասած հարուածներին։ Արշակի նպատակն էր հայրենիքը և իւր արքայական գահը պահպանել զօրեղ ու կանգուն, ուստի և նա ամեն միջոցներով աշխատում էրինքնազլուխ նախարարներին հնազանդեցնել։

Այս նպատակով Արշակ դիմեց մի այնպիսի

ձեռնարկութեան, որ աւելի ևս արծարծեց ըսկուած հրդեհը։ Մասիս լերան հարաւային ստորոտում՝ կոգովիտ գաւառում նա հիմնեց մի նոր քաղաք և ամբողջ երկրի մէջ հրաման հանեց, թէ ամեն տեսակ յանցաւորներ՝ գողեր, աւազակներ, մարդասպաններ, անառակ ու վնասակար մարդիկ եթէ գան բնակութիւն հաստատեն իւր նոր քաղաքում, դատաստանից ու պատժից կազատուին։

Երբ այս հրամանը դուրս եկաւ, կարճ ժամանակում հաւաքուեցան նորաշէն դաստակերտում գողեր, մարդասպաններ և առհասարակ ամեն տեսակ ոճրագործներ։ Ստրուկները փախչում էին տէրերից, գալիս էին այնտեղ, կանայք թողնում էին ամուսիններին, գալիս պատսպարտում էին այնտեղ, ծառաները յափշտակում էին տէրերի ստացուածքն ու փախչում էին այնտեղ, աւանդառուներն իրենց մօտ եղած աւանդներով գալիս թագնուում էին այնտեղ։ Փախստականներն այնքան շատ էին, որ Արշակի նորաշէն աւանը կարճ միջոցում բնակիչներով լցուեց, մեծացաւ, ընդարձակ քաղաք դարձաւ և բոնեց ամբողջ հովիտը։ Թագաւորը նրա անունը դրեց Արշական, շինել տուեց արքունի պալատներ և այնտեղ հաստատեց իւր բնակութիւնը։

Տրտունջ ու դժգոհութիւն բարձրացաւ հայոց երկրում, բայց ուր գնային, ում մօտ արդարութիւն և իրաւունք գտնէին։ Ամեն մարդ վայ

էր տալիս այս ու օրերին, ափսոսում էր անցած ժամանակը, երբ օրէնք և արդարութիւն էր թագաւորում, երբ դատաստան ու իրաւունք կար: Այժմ արդարութիւնը կորած էր, իրաւունքը մեռած, որտեղ դանէին:

Փաւստոս, որ սիրում է շատ դէպքեր հըրաշըներով բացատրել, պատմում է, թէ Ներսէս հայրապետի տեղապահը՝ Խաղ եպիսկոպոս անիծեց Արշակի այս անօրէն գործը, համաձարակընկաւ յանցաւորների քաղաքում, թէ մարդիկ, թէ անսառները կոտորուեցան, և երեք օրուայ մէջ քաղաքն ամայի անսապատ դարձաւ: Հաւանականն այն է, ի Զարկէ, որ Արշակաւանը կործանուեց հայոց նախարարների ձեռով:

Սրանից յետոյ Արշակի ատելութիւնն ու դայրոյթը դէպի նախարարներն այլևս չափ ու սահման չունէր. նա սկսեց անխնայ կոիւ երկրի ընիկ իշխանների դէմ: Շատերին կոտորեց, անժառանդ թողեց և նրանց կալուածներն արքունիք գրաւեց: Շիրակի և Արշարունեաց գաւառների տէր կամսարական իշխաններին ամբողջ ցեղով ջնջեց, նրանց հողերն արքունական սեփականութիւն դարձրեց և Արշարունեաց գաւառում երասխի ձորում մի անմատչելի սարի վրայ շինեց Արտագերս անառիկ բերքը և ամբողջ գաւառի բերքը յատկացրեց բերդի պահպանութեանը:

Թագաւորը շրջապատուած էր այնպիսի մարդկանցով, որոնք շարունակ գրգռում էին նը-

րան նախարարական տների դէմ. նրանց մէջ նըշանաւոր էր արքայական տան ներքինապեար, որին Հայը Մարդպետ էին կոչում: Մի դաժան ու չարասիրտ մարդ, որ չարախօսութիւններով գրգռել էր Արշակի հօրը՝ Տիրան թագաւորին նախարարների դէմ և անմեղ մարդկանց, առանց որևէ յանցանքի, կոտորել էր տուել. իսպառ ջընջել էր տուել Ռշտունեաց և Արծրունեաց տները, չէր խնայել մինչև իսկ կանանց և երեխաններին:

Հայը Մարդպետը մեծ ազդեցութիւն ունէր թագաւորի վրայ, անբաւ հարստութեան տէր էր, բազմաթիւ գիւղեր ու կալուածներ ունէր Հայաստանի զանազան գաւառներում: Մի անգամ շրջելով իւր կալուածները, հասաւ Տարօն գաւառը: Աշտիշատում Ներսէս կաթողիկոսը նրան իւր մօտ հրաւիրեց և մեծ պատիւներով հիւրասիրեց: Ճոխ սեղանից յետոյ նա զբօնում էր եպիսկոպոսական տան առաջ ընկած հրապարակի վրայ: Տեսնելով Աշտիշատի գեղեցիկ դիրքը, շըրջակայ արգաւանդ դաշտերը, որ անվերջ ձգւում էին Արածանու ափերով, նախանձը շարժուեց, սկսեց նախատել Արշակունի թագաւորների յիշատակը, որ այդպիսի սքանչելի վայրերը տուել էին կանացազգեստ մարդկանց և ոչ տղամարդկանց:

Նա ոխերիմ թշնամի էր հոգևորականներին, արհամարհում էր սրբավայրերը և աշխատում էր

Եկեղեցական հողերն ու կալուածները արքունական դաշնել:

—Եթէ ես, Հայր Մարդպետու, կենդանի մընամ և համնեմ թագաւորի մօտ, ասում էր նա, —ինչ որ այստեղ կայ, պէտք է փոխեմ. այստեղ ապրողներին պէտք է դուրս քշեմ, կալուածներն ու հողերը գրաւեմ և նրանց մէջ արքունի պալատներ շնեմ:

Այսպիսի մտադրութիւններով չարասիրտ ներքինին հրաժեշտ տուեց ներսէս հայրապետին և հեռացաւ Աշտիշատից: Երբ իջաւ Արածանու ափը և հասաւ երկու գետերի խառնարանի մօտ, անտառախիտ, մացառոտ մի տեղ, նրան հանդիպեցաւ Շաւասպ Արծրունին, որ ազատուել էր հայրենի տան կոտորածից, սնուել էր Մամիկոնեանների մօտ և այժմ հասուն երիտասարդ էր: Նա վաղուց հետեւում էր չարագործ ներքինապետին, նրանից իւր տոհմական վրէժը լուծելու համար: Այժմ երբ տեսաւ, իսկոյն ճանաչեց, քաղցր խօսքերով հրապուրեց նրան անտառի խորքը, նետը միաց նրա կուրծքը և մարմինը թողեց դաշտի գազաններին կերակուր:

7.

Արշակի թագաւորութեան սկզբից յունաց և պարսից պատերազմները դադարել էին, բայց Միջագետում և Հայստանի հարաւային մասում փոքրիկ արշաւանքներ տեղի էին ունենում պար-

սից գործակալների կողմից, գլխաւորապէս աւարի նպատակով: 356 Թուին յոյները բանակցութիւն սկսեցին պարսիկների հետ, ասպատակութիւններին վերջ գնելու համար: Շապուհ համաձայնեց խաղաղութիւն կնքել այն պայմանով, որ յոյները Միջագետքը և Հայստանը թողնեն իւր իշխանութեան ու տրամադրութեան ներքոյ: Բանակցութիւնները շատ երկար տևեցին և հաշութիւն չկայացաւ: 359 Թուին պարսից ահագին բանակն անցաւ Տիգրիսը և շարժուեց յոյների վրայ. կարճ ժամանակուայ ընթացքում պարսիկներն առան Ամիդը, Միջագետքում շատ ուրիշ բերդեր և մի տարուայ մէջ տիրեցին Տիգրիսից մինչև եփրատ:

Այս պատերազմի ժամանակ Շապուհ օգնութեան կանչեց հայոց թագաւորին և նրա հետ բարեկամութեան դաշն կնքեց: Արշակ իւր հաւատարիմ Վասակ սպարապետի և ուրիշ իշխանների հետ բազմաթիւ զօրքով գնաց Միջագետք: Մինչ պարսից բանակը պաշարել էր Ամիդը, հայոց գնդերն առան Մծբին քաղաքը: Այս յաղթանակը վարձատրելու համար Շապուհ արքան կամենում էր Արշակին մեծ պատիւների արժանացնել, իւր սեփական դուստրը նրան կնութեան տալ, նոյնպէս և մեծ պարգևներով վարձատրել Վասակ սպարապետին: Նա հրաւիրեց Արշակին գնալ իւր հետ Տիգրոն, հարսանիքի հանդէսները կատարելու: Միւնեաց Սնդովկ նահապեալ երբ լսեց Շա-

պուհի մտադրութիւնը, ամեն ջանք դորձ դըեց Արշակին հեռացնելու նրանից։ Անդովկի վախենում էր, թէ իւր դուստրը՝ Փառանձեմ զրկուե թագուհու իրաւունքից ու պատուից և անարդանքի մատնուի, եթէ Արշակ ամուսնանայ պարսից արքայի գստեր հետ. ուստի համոզեց Վասակ սպարապետին, կաշառեց պարսից մեծամեծներին, նոյն խակ թագաւորի աւագ խորհըրդականներից մէկին, որ խռովութիւն ձգեն Շապուհի և Արշակի մէջ։ Խորհրդականն Անդովկի թելադրութեամբ եկաւ Արշակի մօտ և յայտնեց, թէ Շապուհ նենդութեամբ ուզում է նրան տանել Տիգրոն և սպանել։

Դիւրահաւան և տաքարիւն էր Արշակ. սաստիկ զայրացաւ, կանչեց Վասակ սպարապետին, Անդովկի նահապետին և բոլոր մեծամեծ իշխաններին և յայտնեց Շապուհի նենդաւոր խորհուրդը։ Նախարարները իրենց թագաւորի կեանքն ազատելու համար նոյն գիշերն առան նրան և փախան Հայաստան։ Շապուհ տեսաւ, որ Արշակ չարախոսութիւնների զոհ է եղել, դեսպան ուղարկեց, որ վերադառնայ, բայց իզուր. հայոց թագաւորն արդէն իւր երկրումն էր, ընդ միշտ հեռացած պարսիկներից։ Այսուհետև հայոց և պարսից մէջ այլ ևս խաղաղութիւն չեղաւ։

Պատերազմը պարսից և յունաց մէջ շարունակում էր. կոստանդ կայսրն ինքը բանակի գլուխ անցած եկաւ արկելք, երբ հասաւ կեսա-

րիա, հրաւիրեց Արշակ թագաւորին և նրա հետ բարեկամութեան դաշն կապեց։ Յոյները չըկարողացան պարսից ահաւոր զօրութիւնը խորտակել։ 361 թ. Կոստանդ մեռաւ կիլիկիայի Տարսոն քաղաքում և կայսր հրատարակուեց Յուլիանոս. մի քաջասիրոտ, արի և բարձր արժանիքների տէր մարդ, բարձրագոյն կրթութիւն ստացած և հեթանոսական փիլիսոփայութեամբ սընուած, նա ոխերիմ թշնամի էր քրիստոնէութեան, ուստի և քրիստոնէական եկեղեցուց «ուրացող» մականունն է ստացել։ Արշակ դեսպան ուղարկեց նոր կայսեր գահակալութիւնը շնորհաւորելու և յայտնեց, թէ միշտ պատրաստ է նրա հրամանին։ Յուլիանոս, որ հայոց թագաւորներին Հայաստանի իշխան կամ նախարար էր անուանում, պատուիրեց հաղորդել Արշակին, թէ կարիքի դէպքում նրան օգնութեան կըկանչէ։ Յուլիանոս վճռել էր մենակ, առանց ուրիշի օգնութեան խորտակել պարսից զօրութիւնը, կամ յաղթել, կամ ընկնել պատերազմի դաշտում իրու քաջարի զինւոր։

363 թուին Յուլիանոս ընկաւ պատերազմի դաշտում և կայսր ընտրուեց Յովիանոս, որ ոչ նախորդի խելքն ունէր և ոչ քաջութիւնը։ Նա ստիպուեց պարսիկների հետ հաշտութիւն կնքել, թողնելով նրանց Հայաստանի հարաւային գաւառները՝ Արգն, Մոկք, Մաւրէք, Հէր և Զարեւանդ և Կորդուք, տասն և հինգ ամուլ բերդե-

ըով։ Բացի այդ, յոյները պէտք է թողնէին հայոց թագաւորին իւր բաղդին և չպէտք է պաշտպանէին նրան պարսիկների դէմ։ Միայն այդ դաշինքի համաձայն Հայաստանը չմիացուեց պարսից պետութեան հետ, այլ մնաց իրեւ անկախ թագաւորութիւն։

Յովիանոսի մահից յետոյ, երբ հռովմէական պետութեան արևելեան մասում կայսր եղաւ Վաղէս, հայերը դարձեալ աչքերը դարձրին դէպի Յովիանոսատան։ Պարսիկների սպառնացող զօրութեան առաջ փոքրիկ Հայաստանն իրան միանգամայն անօգնական էր զգում։ հայերը հաստատ գիտէին, որ Շապուհի նպատակն է վերջ ի վերջոյ Հայաստանը միացնել Պարսկաստանի հետ, վերջացնել հայոց անկախ թագաւորութիւնը և երկիրը կառավարել պարսից կուսակաների ձեռով։ Իւր սեփական ոյժերով Հայաստանն անկարող էր զիմադրելու պարսից ձգտումներին։ Երկիրը ներքուստ պառակտուած էր, շատ իշխանական տոհմեր հեռացած էին թագաւորից, չէին ուզում նրան նպատակուել, շատերը պատրաստ էին պարսից թագաւորին ծառայելու։ Այսպիսի հանգամանքներում Յովիանոսի մահը և նոր կայսեր գահակալութիւնը նոր յոյս ներշնչեց հայերին։ Հայաստանից մի պատգամաւորութիւն ուղարկուեց կոստանդնուպոլիս, Վաղէսի գահակալութիւնը շնորհաւորելու, յայտնելու նրան հայոց թա-

գաւորի խնդակցութիւնը և յիշեցնելու նախկին դաշնակցութիւնը։

Պատգամաւորութեան գլուխն էր ազգի հոգեոր պետը՝ Ներսէս կաթողիկոս, մասնակցում էին տասը նշանաւոր նախարարներ։ Մամիկոնեան Վահան իշխանը՝ հայոց սպարապետի եղբայրը, Ուշտունեաց Մեկեն նահապետը, Անձեւաց Մեհան նահապետը, Գարջոյլ Մաղխազ, Գնունեաց նահապետը՝ Դեմետ, Բագէնից նահապետը՝ Կիշկէն, Հրսիձորի նահապետը՝ Սուրիկ, Հարուժէնից նահապետը՝ Վրկէն։

Սակայն այս պատուաւոր դեսպանութիւնը Հայաստանի համար օգտակար չեղաւ։ Կայսեր հրամանով Ներսէս հայրապետն աքսորուեց, իսկ նախարարները վերադառն ձեռնունայն։ Հետեանքն այն եղաւ, որ պարսիկներն սկսեցին աւելի կասկածով վերաբերուել հայոց թագաւորին։

## 8.

Ներսէս կաթողիկոսն այս պատգամաւորութեան մէջ առաջին անգամ հանդէս է գալիս երբէ ազգի ներկայացուցիչ յունաց պետութեան առաջ։ Երբ էր նա հայրապետական աթոռը նատել, դժուար է որոշել, եթէ հաւատանք Փաւըստոսի խօսքերին, նա կաթողիկոս ընտրուեց Արշակի թագաւորութեան սկզբին, և Գնէլի սպան-

ման ու նախարարների կոտորածի ժամանակ միջամտում էր երկրի գործերին. իսկ եթէ ձիշտէ, որ նա Հայաստանի եպիսկոպոս է ձեռնադրուել կեսարիոյ Եւսեբիոս արքեպիսկոպոսից, պէտք է ընդունենք, որ նա հայրապետական աթոռն է նստել Յուլիանոս կայսեր օրով, 361 թուից ոչ առաջ:

Ներսէս Յուսիկի թոռն էր, Գրիգոր Լուսաւորչի թոռան թոռը. կրթութիւն էր ստացել կեսարիայում, նշանաւոր վարդապետների ձեռքի տակ, Պատանի հասակում ամուսնացել էր և նուիրուել աշխարհային կեանքի. մտնելով զինւորական ծառայութեան մէջ, թագաւորի պալատում վարում էր սենեկապետի պաշտօն:

Նրա հայրը Աթանագինէս ամուսնացել էր Տիրան թագաւորի Բամբիշ բրոջ հետ. Ներսէս արքայական ընտանիքի մերձաւոր ազգական էր, Արշակի հօրաքըրոջ որդին: Նա ամեն յարմարութիւն ունէր աշխարհական կեանք վարելու և պետական պաշտօնների մէջ առաջ գնալու: Բարձրահասակ էր, վայելչակազմ ու գեղեցիկ, հմուտ զինւորական գործերի, սակայն հեռու էր աշխարհային ձգտումներից, կրօնասէր էր, երկիւղած և աստուածային պատուէրներին հաւատարիմ. մարդասէր, արդարադատ և առհասարակ ամեն առաքինութիւններով օժտուած: Փաւստուքաներ չի գտնում նրա հոգու գերազանց յատկութիւնները գրուատելու:

Երբ հայոց աշխարհի մեծամեծ նահապետները, սատրապները, նախարարներն ու ազատները, պետերը, իշխանները, զօրավարներն ու սահմանապահները ժողովուեցան Արշակ թագաւորի մօտ կաթողիկոսի ընտրութեան համար, ամենքը միաբերան Ներսէսին էին ցանկանում: Բայց երբ նրան կանչեցին և իրենց որոշումը յայտնեցին, չէր համաձայնում, իւր անձն անարժան համարելով այնպիսի ծանր և պատասխանատու պաշտօնի: Ժողովականները միաձայն պնդում էին, որ իրենց պետ և առաջնորդ պէտք է լինի Գրիգոր Լուսաւորչի տնից, որի արժանաւոր զաւակն է Ներսէս: Թագաւորի հրամանով նրա գեղեցիկ գանգուր մազերը խուզեցին, շքեղ հագուստները հանեցին, կրօնաւորի պարզ սքեմ հագցրին, կանչեցին ծերունի Փաւստոս եպիսկոպոսին և նրան սարկաւագ ձեռնադրել տուին: Դրանից յետոյ ժողովուեցան եպիսկոպոսները և հաւանութիւն տուին, որ նա նստի հայրապետական աթոռը: Թագաւորը հրովարտակով և մեծամեծ իշխանների ուղեկցութեամբ նրան ուղարկեց կեսարիա, եպիսկոպոս ձեռնադրուելու:

Հայրապետական աթոռը նստելուց յետոյ Ներսէս եռանդով զբաղւում էր եկեղեցու բարեկարգութեամբ. շինում էր աւեր եկեղեցիները, քարոզիչներ էր կարգում ամեն տեղ, վերահաստատում էր խափանուած կարգերը, հոգեսոր

լուսաւորութիւն էր սփռում իւր հօտի մէջ:  
Հոգում էր աղքատների խնամատարութեան մա-  
սին, պատսպարում էր որբերին:

Նեթանոսական սովորութիւններն ու յիշա-  
տակները ջնջելու և քրիստոնէական կեանք ար-  
ծարծելու համար հայրապետը հայոց բոլոր եպիս-  
կոպոսներից ժողով գումարեց Տարօն գաւառի  
Աշտիշատ գիւղում, որտեղ սահմանեցին Եկեղե-  
ցական կարգեր. Վերացրին ննջեցեաների վրայ  
սուգ անելու հեթանոսական սովորութիւնը, կա-  
նոններ դրին ամուսնութեան վերաբերեալ, որո-  
շեցին, որ ամեն մարդ միայն մի կին ունենայ և  
մերձաւոր աղքականներն իրար հետ չամուսնա-  
նան:

Հայաստանի բոլոր գաւառներում Ներսէս  
հիմնեց դպրոցներ, որտեղ սովորում էին յունա-  
րէն և ասորերէն, քանի որ հայոց տառեր և հա-  
յերէն գրքեր դեռ չկային: Հիմնեց բազմաթիւ  
վանքեր, վանական կեանք զարգացնելու նպա-  
տակով, և նրանց պահպանութեան համար հողեր  
ու կալուածներ յատկացրեց, որպէս զի վանա-  
կանները աշխարհային հոգսերից ազատ լինին,  
հոգեոր կեանքի նուիրուին և քրիստոնէական  
լոյս տարածեն վանքերից հայոց երկրի բոլոր  
խորշերը: Հիմնեց նաև աղքատանոցներ ու անկե-  
ներով:

Նա խորհրդատու հայր էր թագաւորին և

իշխաններին, միջնորդ ու գատաւոր նրանց հա-  
կառակութիւնների ու կոփւների ժամանակ: Իշ-  
խանները նրան էին դիմում թագաւորի բռնու-  
թիւնների գէմ բողոքելու, նրանից էին պաշտ-  
պանութիւն խնդրում. Թագաւորը նրա հեղինա-  
կութեանն էր դիմում ապստամբ իշխաններին  
հնագանդեցնելու համար:

Այսպիսի գերազանց յատկութիւններով օժ-  
տուած, Ներսէս պատկառելի էր գարձել ոչ միայն  
Հայաստանում, այլ և օտարների առաջ. ուստի  
երբ Վաղէս կայսերական գահը բարձրացաւ, Ար-  
շակ մեծամեծ նախարարների հետ նրան կոս-  
տանդնուալովիս ուղարկեց, նոր կայսեր բարեհաճ  
ուշադրութիւնը Հայաստանի վրայ դարձնելու և  
հայոց ու յունաց բարեկամութիւնն ամրապնդե-  
լու համար: Բայց այս դեսպանութիւնը Հայա-  
տանի համար աղետաբեր եղաւ:

Այդ ժամանակ յունաց ամբողջ կայսրու-  
թեան մէջ յուզւում էին արիոսական վէճերը  
Քրիստոսի աստուածութեան և մարդկութեան  
խնդիրների մասին: Եկեղեցին ընդունել էր Նի-  
կիոյ ժողովի որոշումներն իբրև ուղիղ գաւա-  
նութիւն, իսկ Արիոսի հետևողները համարւում  
էին հերետիկոս: Վաղէս կայսրը պաշտպան էր  
արիոսականներին և սաստիկ հալածում էր հա-  
կառակորդներին. նա աքսորեց ուղղափառ եկե-  
ղեցու բազմաթիւ եպիսկոպոսներ, որոնց հետ  
նաև Ներսէսին:

Փաստոսի պատմութեան նայելով, Ներսէս աքսորուեցմի հեռաւոր կղզի, անապատ ու անջուրմի տեղ, ուր ոչ դալար բոյս կար, ոչ արմատ, այլ միայն քար, աւագ և ապառաժ: Նաւերի ճանապարհներից հեռու, ծովի անսահման տարածութեան մէջ առանձնացած մի կղզի էր այդ:

Բոլորը միասին այստեղ կար եօթանասուն աքսորական. Ներսէսի հետ էին իւր երկու սարկաւագները՝ Ռոստոմ և Տիրանամ, որոնք չէին ըաժանուել իրենց հոգեոր հօրից նաև աքսորի մէջ: Կենսական մթերքներից միանգամայն զուրկ էին նրանք. քամին մղում էր ծովի ջուրը դէպի ափը, ալիքներն իրենց հետ բերում թողնում էին աւագի վրայ մեծ քանակութեամբ ձուկ, աքսորականները գնում էին ծովի եզերքը, ժողովում էին ձուկը և նրանով կերակրում:

Հայրապետի բացակայութեան ժամանակ հայոց եկեղեցին կառավարում էր Բագրեանդի և Արշարունեաց եպիսկոպոսը՝ Խաղ, որ հաւատարմութեամբ պահպանում էր Ներսէսի սահմանած բոլոր կարգերը:

9.

Մինչ հայոց հայրապետը հեռաւոր աքսորի մէջ տառապում էր և աղօթում իւր դժբաղդ հայրենիքի համար, Հայաստանում սարսափելի անցքեր էին անցնում:

Շապուհ արքան կասկածով էր նայում հայոց և յունաց յարաբերութիւնների վրայ:

Երբ Արշակ դեսպանութիւն ուղարկեց Վաղէսի գահակալութիւնը շնորհաւորելու, Շապուհ սկսեց աւելի վճռական միջոցների դիմել իւր վաղուցուայ նպատակին հասնելու, Հայաստանը վերջնականապէս միացնելու պարսից տէրութեան հետ: Պարսկական բանակը Հազարաւուխտ և Անդեկան զօրավարների առաջնորդութեամբ Ատրպատականի վրայով մտաւ Հայաստան և աւել ու ասպատակ սփուրելով հասաւ մինչև Վանանդ և Բասեն գաւառները:

Սրիասիրտ Արշակ թագաւորն ինքը բանակի գլուխ անցաւ, Վասակ սպարապետի և մի քանի հաւատարիմ իշխանների հետ գուրս եկաւ թշնամու դէմ և հերոսաբար կռուելով փախցրեց պարսիկներին, հալածեց մինչև Ատրպատականի խորքերը և այստեղ նստած պաշտպանում էր Հայաստանի սահմանը:

Նոյն ժամանակ Հայաստանում ահեղ զօրութեամբ բռնկեցին ներքին երկպառակութիւնները, որոնք աւելի աղետաբեր եղան, քան թէ պարսկական արշաւանքները: Հայոց թագաւորից ապստամբեց Արծրունեաց Մերուժան իշխանը, գնաց Շապուհ արքայի մօտ, երդուեց յաւիտեան ծառայել նրան, ուրացաւ հաւատը, ընդունեց մազգեզանց կրօնը, երկրպագեց արեգակին ու կրակին և նրանց աստուած դաւանեց:

Այդ օրից նա այլ ևս չէր կարող ոտք դնել Հայաստան և վերադառնալ իւր հայրենի տունը։ Նա ուխտ դրեց Շապուհի հետ, որ եթէ պարսիկները նուածեն Հայաստանը և ինքը վերադառնայ իւր բնիկ իշխանութիւնը, Ատրուշն կը կանգնէ նախ իւր սեփական տանը և կաշխատի զրադաշտական կրօնը տարածել հայերի մէջ։

Պարսից թագաւորը մի ահեղ բանակ պատրաստեց, առաջնորդ նշանակեց Մերուժանին և ուղարկեց Հայաստան։ Մինչ Արշակ թագաւորը և վասակ սպարապետը հայոց գնդերով հսկում էին Ատրպատականի սահմանի վրայ, պարսկական բանակը հարաւից՝ Աղձնիքի վրայով մտաւ Հայաստան։ անցաւ Մեծ Ծոփք, Անգեղտուն, Անձիտ, Շահունւոյ Ծոփք, Մզուր, Դարանաղի և Եկեղեց գաւառները։ Դաւաճան իշխանը վրէժ ունէր թագաւորի դէմ, այժմ վրէժը հանում էր խաղաղ, անպաշտպան բնակիչներից։ Պարսիկներն անխնայ աւերում էին Հայաստանի գաւառները և բնակիչներին կոտորում, քանդում ու այրում էին գիւղերն ու աւանները, այր մարդկանց սուր էին քաշում, կանանց ցից հանում, մանուկներին ձգում էին կամսասայլերի կամ փղերի ոտների տակ. շատերին գերի էին տանում, քանդում էին բերդերն ու ամրոցները և այնտեղ ապաստանուածներին անխնայ կոտում էին։

Առան, աւերեցին Տիգրանակերտ մեծ քա-

ղաքը, որ Աղձնեաց Բդեշխի իշխանութեան մէջ էր. Անգեղտուն գաւառում պաշարեցին Անգեղ ամուր բերդը, որտեղ կային շատ Արշակունի թագաւորների շիրիմներ, և հին ժամանակներից Արշակունեաց նախնիքների ձեռով հարուստ գանձեր էին մթերուած, երկար պաշարեցին, բայց սաստիկ ամրութեան պատճառով չկարողացան առնել, թողին հեռացան։ Իշխանների անմատչելի բերդերը զօրեղ գիմագրութիւն էին ցոյց տալիս պարսիկներին. նրանք տիրեցին միայն Դարանաղի գաւառի Անի բերդին, կործանեցին պարիսպները, դուրս բերին այնտեղ պահուած գանձերը, բաց արին հայոց թագաւորների գերեզմանները, ոսկորները հանեցին տարան իրենց հետ իբրև աւար։ Այնտեղից Բասենի վրայով անցան Այրարատ գաւառը, որպէսզի թիկունքից յարձակուին հայոց թագաւորի և սպարապետի վրայ։

Երբ այս սոսկալի աղէտների լուրը հասաւ Արշակին, Վասակ սպարապետը ժողովեց գնդերը, որոնք պատրաստ էին մինչև արեան վերջին կաթիլը կոռւելու իրենց կանանց և որդիների, իրենց հայրենի երկրի, Եկեղեցու և նախնի թագաւորների նշխարների ազատութեան համար։ Սպարապետը թողեց թագաւորին Մարաց երկրի ամուր վայրերում, ինքը զօրքն առած եկաւ Այրարատեան գաւառը, որտեղ ընդարձակ դաշտի վրայ արածուած էր պարօից ահագին բա-

նակը ծովի աւազի նման։ Գիշերային մթութեան  
մէջ Վասակ յանկարծակի յարձակուեց թշնամու  
վրայ, սաստիկ ջարդ տուեց, մաշածներին հա-  
լածեց, դուրս արեց Հայաստանի սահմաններից,  
նրանց ձեռից խլեց հայոց թագաւորների ու-  
կորները և իրրե նուիրական աւանդ ամփոփեց  
Այրարատ գաւառի Աղքք գիւղում, Արագած լե-  
բան ստորոտում։

Մերուժան Արծրունին կարողացաւ փախչել  
ազատուել Վասակի ձեռից, գնաց Պարսկաստան,  
նոր չարիքներ նիւթելու հայոց աշխարհի պլիին։

Հայաստանն այլ ևս խաղաղ օրեր չտեսաւ.  
պարսիկներն անընդհատ արշաւում և աւերում  
էին հայոց գաւառները, իսկ Արշակ թագաւորը  
և Վասակ սպարապետը գիշեր ցերեկ հսկում էին  
աշխարհի վրայ, զէնքը ձեռին պաշտպանում էին  
հայրենիքը թշնամու յարձակումներից։

Երկարատև պատերազմներից յոզնած, տես-  
նելով որ թագաւորն անկարող է երկրի ներքին  
գործերով զբաղուելու, հայոց նախարարներից շա-  
տերը, որոնց հնազանդ էր պահում ոյժը, հետզ-  
հետէ թողնում հեռանում էին իրենց թագաւո-  
րից և, հետեւելով Մերուժանի օրինակին, հպա-  
տակում էին պարսիկներին և նրանց օգնու-  
թեամբ կուում էին իրենց հարազատ տիրոջ հետ։  
Արշակից հեռացան Աղձնեաց Մեծ Բղեշիքը, Աղձ-  
նեաց նահանգի բոլոր նախարարները, հպատա-  
կեցան պարսից թագաւորին, պարիսպ քաշեցին,

փակեցին Զորայ պահակը, այն կիրճը, որ  
ընկնում է Վանայ ծովի և Սասնոյ լեռների  
մէջտեղը, միակ ճանապարհը, որ բերում էր  
Աղձնեաց նահանգից դէպի Հայաստան, դէ-  
պի Տարօն գաւառը. փակեցին այդ ճանա-  
պարհը և իրենց երկիրը բաժանեցին հա-  
յոց երկրից։ Արշակից ապստամբեցան նոշի-  
րական, Մահկեր տան և Նիխորական իշխանու-  
թիւնները Հայաստանի հարաւային և հարաւ—  
արևելեան սահմաններում, գլուխ բարձրացրին  
Գուգարաց Բղեշիքը, Զորայ գաւառի տէրը, Կող-  
բայ գաւառի տէրը, Գարդմանաձորի տէրը և  
նրանց մօտերն ու շուրջը գտնուող իշխանու-  
թիւնները Հայաստանի հիւսիսում։ Ապստամբեց  
Արձախի ամուր գաւառը, Տմորեաց լեռնագա-  
ւառը, Կորդերիք անմատչելի գաւառը, նրանց բո-  
լոր նահապետները գնացին հնազանդեցան պար-  
սից թագաւորին։

Հայոց թագաւորի իշխանութիւնից դուրս  
եկան Ատրպատական աշխարհը, Կազբից աշխարհը,  
Մարաց ամուր երկիրը։ Նրա իշխանութիւնն  
այլ ևս չէին ճանաչում Անձիտ գաւառի տէրը՝  
Սաղամուտ, Մեծ Ծոփաց իշխանը, սրանք էլ  
գնացին հպատակեցան յունաց կայսրին։ Միջ-  
նաշխարհում մնացած իշխաններն էլ վստահու-  
թիւն չունէին թագաւորի վրայ, նրա հրաման-  
ները չէին կատարում, այլ բերդերի մէջ ամրա-  
ցած, իրենց աձնական ապահովութեան մասին

էին մտածում: Այսպէս պառակտուեց, բաժան բաժան եղաւ ու տկարացաւ հայոց թագաւորութիւնը:

Այս բոլոր հարուածների վրայ աւելացաւ մի նոր, անսպասելի հարուած ևս: Վասակ սպառապետի կրտսեր եղբայրը՝ Վահան Մամիկոնեան, որ պատուաւոր իշխաններից էր և մասնակցել էր Վաղէս կայսեր մօտ գնացած պատգամաւորութեանը, հրապուրուեց իւր քրոջ որդի Մերուժան Արծրունու խորհուրդներից, գնաց Պարսից թագաւորի մօտ, դաւաճանեց Մամիկոնեան տան աւանդութիւններին, ուրացաւ հաւատը և ընդունեց մոգական կրօնը: Այնուհետև նա կատարում էր Շապուհ արքայի ցանկութիւնները՝ ամբաստանում էր Վասակ Սպարապետին և Արշակ թագաւորին, յիշեցնում էր Շապուհին, որ իւր աւագ եղբայրը՝ Մամիկոնեան տան նահապետը՝ Վարդան նրան հաւատարիմ լինելու պատճառով սպանուել էր Արշակի հրամանով և Վասակի ձեռով: Իւր հաւատարիմ ծառայութեամբ Վահան Մամիկոնեան այնպէս գրաւեց Շապուհի սէրը, որ սա իւր Որմիզդուխտ քրոջը նրան կնութեան տուեց. շնորհեց նրան այնքարձը և պատիւը, որ նրանախնիքն ունէին արքայից արքայի պալատում. նրան դարձրեց իւր սիրելի փեսան և բարձր պաշտօն տուեց իւր բանակի մէջ:

Տեսնելով, որ մեծամեծ նախարարները հեռացել են Արշակից, որ նա մնացել է գրեթէ անօգնական, Շապուհ անցածը մոռանալու և

բարեկամութիւն հաստատելու պատրուակով նըրան իւր մօտ կանչեց, սպառնալով, որ եթէ չգայ, պատերազմը կըշարունակէ: Նա երդուեց, որ Արշակի կեանքին վտանգ չի սպառնում, և իւր խօսքերը հաստատելու համար մոգական օրէնքի համաձայն աղը կնքեց վարազանկար մատանով և ուղարկեց Հայաստան:

Նախարարները, թերեւս բարիք սպասելով այս տեսակցութիւնից, յուսալով, որ վերջապէս խաղաղութիւն կըլինի և իրենք կը հանգստանան երկարատև պատերազմներից, խորհուրդ տուին թագաւորին գնալ: Արշակ մնացել էր գրեթէ մենակ, անօգնական, հնար չունէր պարսից արքայի հրամանին հակառակելու, ուստի առաւ իւր անձուէր Վասակ Սպարապետին, գնաց Տիգրոն և ներկայացաւ արքայից արքային:

Հնաւանդ սովորութիւն էր, որ երբ հայոց թագաւորը պարսից արքունիքն էր գնում, արքայավայել պատիւներով ընդունում էին. իսկ այս անգամ Շապուհ նրա հետ վարուեց իբրև հպատակի և ծառայի հետ, յանդիմանեց նրան իւր անհնապանդութեան համար և յանձնեց արքայական թիկնապահների՝ փուշտիպանների հըսկողութեանը: Հայոց թագաւորն այժմ Շապուհի գերին էր:

Երբեմն երբեմն նա իւր առջևն էր բերել տալիս դժբաղդ թագաւորին, խորամանկութեամբ ուզում էր փորձել նրա հաւատարմու-

թիւնը։ Նախապաշտուած ու կրօնամոլ էր Շապուհ արքան. կանչեց մոգերին և աստղագէտներին և հարցրեց, թէ ինչպէս վարուի հայոց թագաւորի հետ, ինչպէս իմանայ, թէ այսուհետև նա հաւատարիմ կըլինի, եթէ նրան արձակէ իւր երկիրը։

Մոգերը և աստղագէտները պատասխանեցին. «Նրան այստեղ պահիր, տէր արքայ, մարդ ուղարկիր հայոց երկիրը, այնտեղից բերել տուր երկու բեռ հող և մի կահոյր ջուր, հրամայիր վրանի յատակի կէսը հայոց հողով ծածկել և հայոց ջուրը վերան ցանել. յետոյ բռնիր Արշակ թագաւորի ձեռից, տար նախ այնտեղ, որտեղ մեր հողն է և մի քանի բան հարցուր. ապա տար հայոց հողի վրայ և դարձեալ հարցեր տուր. այն ժամանակ կիմանաս, թէ չայաստան գնալուց յետոյնա իւր ուխտին հաւատարիմ կըմնայ, թէ կապստամբիւ. եթէ հայոց հողի վրայ եղած ժամանակ համարձակ ե յանդուզն խօսի, իմացիր, արքայ, որ իւր երկիրը հասնելուն պէս առաջուայ նման կըվարուի և պատերազմը կընորոգէ»։

Շապուհ հետեւց մոգերի խորհրդին. Արշակին բերել տուեց իւր առաջ և ձեռից բռնած սկսեց շրջել վրանի մէջ. Երբ պարսից հողի վրայ էին, ասաց նրան. «Հայոց թագաւոր Արշակ, ինչո՞ւ թշնամացար ինձ հետ. ես քեզ որդու նման սիրեցի, կամեցայ իմ հարազատ դուստրը

քեզ կնութեան տալ, իսկ դու ինձ հետ թշնար վարուեցիր և շարունակ պատերազմում էիր»։

Արշակ թագաւորը զլուխը քաշ ձզած, երկշուտ ձայնով ասաց. «Ներիր, տէր, մեղաւոր եմ քո առաջ. ես եկայ, պատերազմեցի քո թշնամիների հետ և սպասում էի վարձատրութեան ու պարզեների, բայց թշնամիներու մոլորեցըին ինձ, վախեցըին և փախցըին։ Այժմ եկել եմ քեզ մօտ. քո ծառան քո ձեռին է, ինչպէս կամենում ես, այնպէս վարուիր. կամենում ես սպանիր, կամենում ես խնայիր. ես յանցաւոր և մահապարտ եմ»։

Շապուհ արքան նրա ձեռից բռնած, շրջելով տարաւ, իբրև թէ պատահաբար, հայոց հողի վրայ։ Արշակ հէնց որ ոտը դրեց մայրենի հողի վրայ, նոր ոգի ստացաւ, հպարտացաւ, ըմբոստացաւ և ուրիշ կերպ սկսեց խօսել։ «Հեռացիր ինձնից չարագործ, ասաց նա Շապուհին, դու, որ ծառայ լինելով տիրացել ես քո տէրերին։ Ես չեմ թողնիլ քեզ և քո որդիներին իմ նախնեաց վրէժը, չեմ ներիլ պարթև Արտաւան թագաւորի մահը. այժմ գուք՝ ծառաներդ գրաւել էք մեր՝ տէրերիս գահը, բայց ես կըվերադարձնեմ մեր իշխանութիւնը մեզ»։

Շապուհ արքան համոզուեց. որ եթէ Արշակ չայաստան վերադառնայ, պարսիկներից վրէժ պէտք է լուծէ, ուստի հրամայեց նրան շղթաներով կապել, տանել հեռաւոր Խուժաստանի խոր-

բերը և բանդարկել Անդմըշ բերդում, որ կոչւում էր Անյուշ բերդ, որտեղ ընկնողն այլևս մինչև մահ չէր կարող ազատուել, լոյս ու արև տեսնել:

Հետևեալ օրը Շապուհ իւր մօտ կանչեց Մամիկոնեան Վասակ սպարապետին, սկսեց նախատել այսպիսի խօսքերով. «Աղուէս, դու էիր խառնակիչը. դու էիր, որ այնքան նեղութիւն պատճառեցիր մեզ, որ այսքան տարիներ կոտորում էիր արեաց զօրքը. աղուէսի մահով կսպանեմ քեզ»:

Անվեհեր Վասակ սպարապետը պատասխանեց.

—Դու տեսնում ես ինձ մարմնով փոքրիկ, ուստի և չես ճանաչում իմ մեծութեան չափումինչև այժմ ես քեզ համար առիւծ էի, իսկ այժմ աղուես եմ: Մինչ ես Վասակն էի, հսկայ էի. մի ոտս մի լեռան վրայ էր, միւս ոտս միւս լեռան վրայ. երբ աջ ոտիս վրայ էի յենւում, աջ լեռն էր գետնին հաւասարուում. իսկ երբ ձախ ոտիս վրայ էի յենւում, ձախ լեռն էի ներքեւ տանում:

—Բայց ովքեր են այդ երկու լեռները, հարցրեց Շապուհ արքան:

—Երկու լեռներից մէկը դու էիր, պատասխանեց Վասակ, միւսը յունաց կայսրը: Քանի Աստուած մեզ օգնում էր, քանի մեր հօր՝ Ներսէսի օրհնութիւնը մեզ վրայ էր, Աստուած մեզ

ձեռից չէր թողել: Այն ժամանակ կարող էինք քեզ ցոյց տալ, թէ մենք ով ենք. իսկ այժմ բաց աչքով ընկել ենք խորխորատը. այժմ քո կամքն է, արքայ, ինչ ուզում ես, արա:

Շապուհ այլ ևս չկարողացաւ համբերել. հրաման տուեց մորթել Վասակ սպարապետին, մորթը խոտով լցնել, տանել Անյուշ բերդը և դնել իւր տիրոջ՝ Արշակ թագաւորի դիմաց, թըշուառ բանտարկեալին անողորմ տանջելու համար:

Հաւատարիմ սպարապետն անբաժան էր իւր սիրելի թագաւորից ամբողջ կեանքում, անբաժան մնաց նաև մահուանից յետոյ:

## 10.

Մինչ հայոց երկիրը իւր անձնուէր թագաւորին և քաջ սպարապետին կորցնելուց յետոյ սոսկալի աղետների ասպարէզ էր դարձել, Արշակ դեռ կենդանի էր, բայց արևի լուսից զըրկուած, տառապում էր Անյուշ բերդի մթին խորշերում, ծանր շղթաների տակ:

Այդ ժամանակ պարսից զօրքը պատերազմում էր քուշանների դէմ, որոնց թագաւորը նստում էր Բալս քաղաքում և տիրում էր Պարսկաստանից դէպի հիւսիսարևելք տարածուած լայնատարած հարթութիւններին: Պարսից զօրքի շարքերում քուշանների դէմ կուռում էին նաև հայոց աշխարհից տարուած գերինե-

ըը, որոնց մէջ էր Արշակ թագաւորի հաւատացիմ և սիրելի ներքինին՝ Դրաստամատ:

Տիրանի և Արշակի օրերումնա եղել էր Անզեղ-  
տուն գաւառի իշխան, Անզեղ բերդի բոլոր զան-  
ձերի վերակացու և պահապան և բոլոր արքունի  
բերդերի հրամանատար: Նրա պահպանութեանն  
էին յանձնուած նաև Ծոփաց գաւառի Բնաբեղ  
բերդի արքունական գանձերը: Թագաւորի պա-  
լաւտում նրա բարձը վեր էր բոլոր նախարար-  
ների բարձերից: Նրա պաշտօնն էր գործակա-  
լութիւն և մարդպետութիւն. նա ներքինիների  
հայր էր, իսկ գործակալութիւնն ու մարդպե-  
տութիւնը ներքինիների հօր գործն էր:

Երբ Պարսիկները բռնեցին Արշակ թագա-  
ւորին, Դրաստամատ ներքինուն ևս տարան  
Պարսկաստան: Արշակի բանտարկուելուց յետոյ  
Դրաստամատ մնաց Պարսկաստանում, և քուշան-  
ների յարձակման ժամանակ ուրիշ հայ գերինե-  
րի հետ ուղարկուեց նրանց դէմ պատերազմե-  
լու: Պարսից զօրքը չարաչար պարտութիւն կը-  
րեց. շատ մարդ ընկաւ պատերազմի դաշտում,  
շատերն էլ գերի բռնուեցան: Դրաստամատ հե-  
րոսական քաջութիւններ գործեց և նոյն իսկ  
Շապուհ արքային մահուանից ազատեց, երբ  
նրան շրջապատել էր քուշան զօրքը: Նա թշնա-  
մու բանակից շատ մարդ կոտորեց և քաջերի  
զլուխները բերեց թագաւորի առաջ:

Երբ Շապուհ պատերազմից վերադարձաւ և

հասաւ Տիգբոն, իւր մօտ կանչեց Դրաստամա-  
տին, նրա անձնուէր ծառայութիւնը վարձատ-  
բելու համար:

— Խնդրից ինձնից պարգևներ, ասաց նա,  
քո երախափը մեծ է ինձ վրայ, և ինչ որ  
խնդրես, կը կատարեմ:

Դրաստամատ սիրա առաւ արքայից արքայի  
բարեհաճ տրամադրութիւնից և ասաց.

— Ես ոչինչ չեմ ցանկանում, տէր արքայ,  
հրաման տուր միայն գնամ տեսնեմ իմ հարա-  
զատ տիրոջը՝ հայոց Արշակ թագաւորին: Հրա-  
ման տուր գնամ նրա մօտ, մի օրով միայն ար-  
ձակեմ նրա կապանքները, լուանամ և օծեմնրա  
դիուխը, արքայական զգեստ հագցնեմ, ընթրիփի  
սեղան պատրաստեմ, խորտիկներ դնեմ նրա ա-  
ռաջ և գինով ու նուազածութեամբ ուրախա-  
ցնեմ նրան. մի օր միայն:

Խնդրին անսպասելի էր, ուստի և Շապուհ  
դժուարանում էր կատարել: Այն օրից, երբ  
հիմնուել էր պարսից թագաւորութիւնը, երբ կա-  
ռուցուել էր այն բերդը, որ կոչւում էր Անյուշ  
բերդ, մարդկային ոչ մի արարած չէր համար-  
ձակուել յիշեցնել արքայից արքային այնտեղ  
բանտարկուած հասարակ մահկանացուի մասին  
անգամ, ուր մնաց հայոց թագաւորի մասին, որ  
արքայից արքայի ոխերիմ թշնամին էր: Արեաց  
տէրութեան մէջ ոչ չէր յիշում Անյուշ բեր-  
դի անունը, իսկ ով որ յիշում էր, մահպարտ

էր համարւում. և Դրաստամատ չէր կարող ազատուել, եթէ Շապուհի վրայ մեծ երախտիք չունենար: Նրա մատուցած մեծ ծառայութիւնը վարձատրելու համար Շապուհ կատարեց նրա խնդիրը. խախտեց պարսկական օրէնքն ու աւանդութիւնը և իրաւունք տուեց նրան գնալ տեսնել իւր թագաւորին: Շնորհեց նրան արքունի մատանով կնքած հրովարտակ և արքունական փուշտիպանի հետ ուղարկեց Խուժաստան: Հրաման տուեց նրա առջև բաց անել բերդի դռները, որ անարգել մտնի Արշակի բանալը, և տեսակցի նրա հետ ինչպէս ինքն է ցանկանում:

Արքայական հրովարտակն առած, Դրաստամատ փուշտիպանի հետ ճանապարհ ընկաւ դէպի Անյուշ բերդը. նրա առջև բացուեցան մոայլ բերդի երկաթի դռները: Անձնուէր իշխանը տեսւ և համբուրեց իւր տիրոջը, արձակեց նրա ծանր շղթաները, գլուխը լուաց, ազնիւ զգեստ հազցըրեց, ընթրիք պատրաստեց և մեծարեց նըռան, ինչպէս թագաւորին է վայել, գուսաններով ու երաժտութեամբ նրան ուրախացրեց, սթափեցը երկար տարիների թմրութիւնից, մխիթարեց ու սփոփեց:

Ընթրիքից յետոյ աղանդեր մատուցին. թագաւորի առջելը դրին մրգեղէն՝ ինձոր և վարունկ, դանակը ձեռը տուին, որ կարէ և ուտէ: Դրաստամատ ոտքի վրայ սպասաւորում էր և


ամեն կերպ աշխատում էր նրան ուրախացնել: Երբ թագաւորն արբեցաւ, կարծես խոր քնից սթափուեց. յիշեց անցած օրերը, յիշեց իւր արքայական զօրութիւնն ու փառքը, նրա սիրտը լցուեց, խոր հոգոց հանեց և ասաց

—Վայ ինձ, Արշակիս, այս վիճակին հասայ. նրքան անցքեր անցան իմ գլխով, ուր էի և ուր հասայ: Այս ասաց, ձեռի դանակը միեց սիրտը, իսկոյն գետին տապալուեց ու հոգին աւանդեց:

Դրաստամատ վրայ ընկաւ, հանեց թագաւորի սրտից արիւնաթաթախ դանակը, նրանով ծակեց իւր կուշտը և անշնչացած ընկաւ իւր տիրոջ դիակի վրայ:



ՀՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
7/11 1922  
\*ՀՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՂԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ  
Ա. ԱՅԱՍՏԻ ԱՆԴՐԱ ԱՆՎԱՆ





«Ազգային գրադարան»

NL0417152

